Co-funded by the European Union
KONRAD ADENAUER STIFTUNG
YIC YOUTH INITIATIVE CENTRE
World Vision Armenia
MEDIA INITIATIVES CENTER

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2024

YOUth in Action

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԳՈՐԾԵԼԻՍ.
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՁՈՐԵՂԱՑՄԱՆ
ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ» ԾՐԱԳԻՐ

Ծրագրի համակարգող՝ Մարիետա Գևորգյան

Ուսումնասիրության հեղինակ՝ Կարեն Տերտերյան,

երիտասարդության հարցերի փորձագետ, հետազոտող

Ձևավորող՝ Թամարա Դավոյան

Հայաստանում ոչ ֆորմալ ուսուցման և քաղաքացիական կրթության գործիքների, պրակտիկաների սույն ուսումնասիրությունն իրականացվել է 2023 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության պատվերով՝ «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի շրջանակում:

Ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի, Վորլդ Վիժն Հայաստանի և Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի հետ համատեղ:

Հրապարակումը նախատեսված է երիտասարդության հարցերով հետաքրքրված կազմակերպությունների, փորձագետների, ուսուցանողների, պետական ու ՏԻՄ լիազոր մարմինների, միջազգային գործընկերների և երիտասարդության լայն շրջանակի համար:

Ցանկացած ձևով սույն հրապարակման ամբողջական վերարտադրումը, վերամշակումը կամ թարգմանությունը կարող է իրականացվել միայն Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ-ի գրավոր համաձայնությամբ: Իսկ որևէ հատվածի վերարտադրումը թույլատրելի է միայն շահույթ չհետապնդող, ոչ առևտրային նպատակներով՝ սույն սկզբնաղբյուրին պատշաճ հղման պայմանով:

Հրապարակումը հնարավոր է ներբեռնել www.yic.am կայքից:

Co-funded by the European Union

Սույն հրապարակման մեջ ներկայացված են հեղինակի, քննարկումների մասնակիցների և փորձագետների կարծիքները և պարտադիր չէ, որ դրանք արտացոլեն Եվրոպական միության, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի, Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի տեսակետները: Ոչ Եվրամիությունը, ոչ էլ նշված կառույցները չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Ձեկույցի էլեկտրոնային հրապարակում, 2024
«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 11

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ 15

Ա) Անվտանգային մարտահրավերներ, անորոշ ապագա 16

Բ) Երիտասարդական պետական ու համայնքային քաղաքականությունների բացեր / բացակայություն 17

Գ) Սոցիալ-տնտեսական խոցելիություն 18

Դ) Կրթական հիմնախնդիրներ 20

Ե) Քաղաքական, քաղաքացիական ոչ լիարժեք մասնակցություն 22

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՑԱՆԿ 25

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ 25

ՀԱՐԹԱԿՆԵՐ 26

ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿՆԵՐ 27

ՄՈԴԵԼՆԵՐ, ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԵՐ 29

ՃԱՄԲԱՐՆԵՐ 31

ԹԵՄԱՏԻԿ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ 31

ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ, ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 35

ԹՎԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ, ԳՈՐԾԻՔՆԵՐ 37

ԽԱՂԵՐ 38

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 41

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 49

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 49

ՆԵՐԴԻՐՆԵՐ 49

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 49

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 49

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ 52

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵՆԿ	Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն
ԿԱՀ	Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ
ԿԳՄՍ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄՆԿ	Մեդիա նախաձեռնությունների կենտրոն
ՎՎՀ	Վորլդ Վիժն Հայաստան
ՏԻՄ	տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ոչ ֆորմալ ուսուցման և քաղաքացիական կրթության գործիքների, պրակտիկաների սույն ուսումնասիրությունն իրականացվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի պատվերով՝ **«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման»** ծրագրի շրջանակում: Ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի հետ համատեղ: Ծրագրի նպատակն է հզորացնել և կրթել երիտասարդներին և երիտասարդական կազմակերպություններին՝ ակտիվորեն մասնակցելու Հայաստանում քաղաքացիական և հասարակական կյանքին:

Ծրագրի մանրամասներին ու առանձին գործողություններին կարելի է ծանոթանալ ու հետևել՝

- Ծրագրի սոցցանցային էջում,
- ԿԱՀ հայաստանյան մասնաճյուղի պաշտոնական կայքում,
- ԵՆԿ պաշտոնական կայքում,
- ՎՎՀ պաշտոնական կայքում,
- ՄՆԿ պաշտոնական կայքում:

Ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտել Հայաստանում երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու առաջնորդության հմտությունների զարգացմանն ուղղված գործիքների կիրառման բացերը, թերությունները և հնարավորությունները:

Ուսումնասիրությունը հիմք է հանդիսանալու ծրագրի շրջանակներում հաջորդող գործողության՝ «Քաղաքացիական կրթության նորարարական գործիքների մշակման ենթադրամաշնորհի» համար՝ հնարավորություն տալով սահմանել ենթադրամաշնորհային մրցույթի ուղղություններն ու առաջնահերթությունները:

Զեկույցը ներկայացնում է ուսումնասիրության մեթոդաբանությունը, ընթացքում հանդիպած սահմանափակումները, արդյունքների վերլուծությունը, հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

Հեղինակն ու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնն իրենց երախտագիտությունն են հայտնում բոլոր նրանց, ում շնորհիվ հնարավոր դարձավ հրապարակել ներկայացվող ուսումնասիրությունը: Մենք բարձր ենք գնահատում հարցումներին ու հարցազրույցներին մասնակցած բոլոր դերակատարների՝ երիտասարդների, երիտասարդական աշխատողների, փորձագետների, ՔՀԿ ներկայացուցիչների բովանդակային ներդրումն ու թանկ ժամանակը: Երախտապարտ ենք մասնակիցներին իրենց կարծիքներն ու մտքերը մեզ վստահելու համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ուսումնասիրության շրջանակներում՝ հիմք ընդունելով ոլորտային որոշ փաստաթղթեր[1], թեմատիկ գրականություն ու ՀՀ-ում երիտասարդական աշխատանքի[2] և ՔՀԿ-ների կողմից իրականացվող երիտասարդական ծրագրերի պրակտիկան, կիրառված հասկացությունների համար նկատի է առնվում հետևյալը.

Առաջնորդություն. սոցիալական ազդեցության գործընթաց, որն առավելագույնի է հասցնում այլոց ջանքերը որոշակի նպատակի հասնելու համար: Ի տարբերություն «ղեկավարման», որը սովորաբար ֆորմալ (իրավունքի ուժով) բնույթ է կրում, «առաջնորդությունը» բնական սոցիալ-հոգեբանական գործընթաց է և պայմանավորված չէ ֆորմալությունից, իշխանությունից, տիտղոսներից, կոչումներից, հիերարխիայից:

Առաջնորդության հմտություններ. անձի՝ որոշակի և ընդհանուր նպատակների հասնելու համար անհատի կամ խմբի կարողությունների ու մոտիվացիայի վրա ազդելու, նրանց ոգեշնչելու, ուղղորդելու և նրանց աջակցությունը ստանալու ունակությունների համախումբ, «իր հետևից տանելու» գործնական հմտությունների ամբողջություն:

Երիտասարդ. Հայաստանի Հանրապետության 14-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 14-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից, էթնիկական ինքնությունից, գենդերային կողմնորոշումից ու հաշմանդամությունից, քաղաքական պատկանելությունից կամ ֆիզիկական դիրքից[3]:

Երիտասարդություն. մանկության և հասունության միջև գտնվող սոցիալ-ժողովրդագրական խումբ, որն ունի հատուկ պահանջմունքներ, հետաքրքրություններ, իրավունքներ, տարիքային, սոցիալ-հոգեբանական ու այլ տիպի առանձնահատկություններ:

Ոչ ֆորմալ կրթություն / ուսուցում. որոշակի մեթոդաբանություն ու կառուցվածք ունեցող, պլանավորված կրթական ծրագրերի և գործընթացների ամբողջություն, որը տեղի է ունենում ֆորմալ կրթական համակարգից դուրս, և որը սովորաբար չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման: Ոչ ֆորմալ

[1] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 25 դեկտեմբերի 2014 թ. N 54 արձանագրային որոշում, 1-ին կետի 1)-ին ենթակետ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96116 [20.12.2023]

[2] Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույց, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 30 դեկտեմբերի 2022 թ. N 2505-Ա/2 հրաման, https://escs.am/files/files/2023-03-03/06e10ab64eb4ae3f37d00f1e80e874c9.pdf [20.12.2023]

[3] Պետք է հաշվի առնել, որ պետական որոշ գերատեսչություններ, տեղական ու միջազգային կազմակերպություններ կիրառում են նաև տարիքային այլ բաժանումներ:

կրթությունը հարատև կրթության (ողջ կյանքի ընթացքում) հայեցակարգի անբաժանելի մասն է, որը երաշխավորում է, որ երիտասարդներն ու մեծահասակները ձեռք բերեն և պահպանեն շարունակաբար փոփոխվող միջավայրին հարմարվելու համար անհրաժեշտ հմտություններ, կարողություններ և մոտեցումներ: Ոչ ֆորմալ կրթության կարևոր մասն իրականացնում են հասարակական և երիտասարդական աշխատանքներում ներգրավված կազմակերպություններն ու անհատները:

Քաղաքացիական կրթություն. երեխաների և երիտասարդների քաղաքական գրագիտության բարձրացմանն ուղղված կրթական գործընթաց:

Քաղաքացիական հասարակության կառույց. կազմակերպչական կառույց, որի անդամները ժողովրդավարական գործընթացի միջոցով ծառայում են ընդհանուր շահերին և միջնորդի դեր են խաղում պետական իշխանությունների, ՏԻՄ-ների և քաղաքացիների միջև:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության համար կիրառվել է խառը մեթոդներով հետազոտությունը, մասնավորապես՝ համաժամանակյա (տվյալները փոխհաստատող) հետազոտական մեթոդաբանությունը:

Գրասենյակային հետազոտության ընթացքում հնարավորինս ուսումնասիրվել ու քարտեզագրվել են Հայաստանում երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու առաջնորդական հմտությունների զարգացմանն առնչվող տարբեր գործիքներ (նշում[4]):



Գծապատկեր 1. Ուսումնասիրված գործիքների քանակական պատկեր

Փաստաթղթերի վերլուծության միջոցով զուգահեռ ուսումնասիրվել են հնարավոր թեմատիկ աղբյուրները (ուսումնասիրություններ, վիճակագրական տվյալներ, իրավական փաստաթղթեր):



Գծապատկեր 2. Ուսումնասիրված փաստաթղթերի քանակական պատկեր

[4] **Ծանոթություն բոլոր գծապատկերների ու աղյուսակների համար.** որոշ դեպքերում տվյալները ներկայացված են կլորացման կանոններին համապատասխան: Եթե մի դեպքում որևէ X թիվ = Y%-ի, իսկ մեկ այլ դեպքում՝ Y+/-1%-ի, ապա պետք է նկատի ունենալ, որ նախնական արժեքները պահպանված են և ներկայացված տվյալներում հավանական ոչ նշանակալի շեղումները տասնորդական արժեքների չներկայացման արդյունք են:

Որակական ուսումնասիրության ընթացքում իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ և փորձագիտական խորքային հարցազրույցներ 70 դերակատարի ներգրավմամբ, մասնավորապես՝ անկախ փորձագետներ, քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ, երիտասարդական աշխատողներ, 16-ից 30 տարեկան երիտասարդներ: Մասնակիցները ներգրավվել են ՀՀ բոլոր մարզերից ու մայրաքաղաքից:



Գծապատկեր 3. Մասնակիցների քանակական տվյալներ (n=70, %)



Գծապատկեր 4. Մասնակիցների գենդերային բաշխում (n=70, %)

Բացի գործիքների, պրակտիկաների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունից, զեկույցը ներառում է նաև դեպքի ուսումնասիրության (case study) մեթոդով ներկայացված օրինակներ՝ այդ գործիքների, պրակտիկաների օգտագործումը առանձին ուղղություններում ցուցադրելու համար:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2023 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, հրապարակման պատրաստվել՝ 2024 թ. հունվարին:

Ուսումնասիրության սահմանափակումները

Ուսումնասիրության մեկնարկը համընկել է Հայաստանի նորագույն պատմության համար ծանր ժամանակահատվածներից մեկի հետ. 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց 9 ամիս շարունակ շրջափակման ու հումանիտար ճգնաժամի[5] մեջ գտնվող Արցախի (Լեռնային Ղարաբաղի) դեմ՝ միտումնավոր գնդակոծելով բնակավայրերը, ինչի հետևանքով եղան զոհեր նաև քաղաքացիական բնակչության շրջանում: Ցեղասպանական ու պատերազմական հանցագործությունների[6] հետևանքով մինչև հոկտեմբերի սկիզբ ավելի քան 100 հազար արցախաբնակ բռնի տեղահանվեց իր բնօրրանից ու հաստատվեց Հայաստանում[7]:

Ստեղծված իրավիճակում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու ակտիվ երիտասարդների զգալի մասը ծանրաբեռնված էին բռնի տեղահանվածների համար աջակցություն կազմակերպելով ու հումանիտար խնդիրները մեղմելով: Բնականաբար, այդ ժամանակ ուսումնասիրությունը չէր կարող տեղեկատվության հիմնական աղբյուր հանդիսացող դերակատարների հետաքրքրությունների առաջնային առարկա լինել, ինչի պատճառով որակական ուսումնասիրության մի շարք գործողություններ իրականացվել են նախատեսվածից ուշ:

[5] Azerbaijan: Blockade of Lachin corridor putting thousands of lives in peril must be immediately lifted, Amnesty International, 09.02.2023, https://www.amnesty.org/en/latest/news/2023/02/azerbaijan-blockade-of-lachin-corridor-putting-thousands-of-lives-in-peril-must-be-immediately-lifted/ [20.12.2023]

[6] Genocide and Forced Deportation: Nagorno-Karabakh, Genocide Watch, Sep 29, 2023 https://www.genocidewatch.com/single-post/genocide-and-forced-deportation-nagorno-karabakh [20.12.23]

[7] Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց թիվը 100 հազար 632 է: Արմենպրես, 04.10.2023 https://armenpress.am/arm/news/1121185/lernayin-xarabaxic-hayastan-brni-texahanvats-andzanc-tivy-100-hazar-632-e.html [20.12.23]

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ-ում ոչ ֆորմալ ուսուցման պետական քաղաքականությունը

Հայաստանում ոչ ֆորմալ կրթության (ուսուցման) տարածումը սկսվել է 20-րդ դարի 90-ական թվականներից[8]: Պետությունը պարբերաբար հայտարարել է, որ կարևորում է ոչ ֆորմալ կրթության նշանակությունը, չափանիշների մշակման և ներդրման կարևորությունը և աջակցում է համապատասխան ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը[9]:

Պետությունը փորձել է նաև սահմանել ոչ ֆորմալ կրթությունը.

«Ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)՝ կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի»[10]:

Ցավոք այս սահմանումը չի ներառում (կամ առնվազն թեմայից ոչ տեղյակ մարդուն չի հուշում) ոչ ֆորմալ կրթության ամենաէական հատկանիշներից մեկը, ըստ որի կրթության այս ձևի հիմնական նպատակը անհատի փոխակերպումն է (տրանսֆորմացիան) սոցիալական հմտությունների, կարողությունների ու անձնային արժեհամակարգի զարգացման միջոցով:

Ներդիր 1. Ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ դրույթներ ունեցող ՀՀ իրավական ակտերի ցանկ՝

ՀՀ օրենքներ

- «Կրթության մասին» (1999), Հոդված 3, 1.2), 1.4), 1.6), 1.11), 1.13) և 1.16) կետեր, Հոդված 6, 2.1 մաս, Հոդված 26, 1-ին մաս, Հոդված 26.1 ամբողջությամբ, Հոդված 36, 6.2) կետ, Հոդված 37, 9.1), 9.3), 9.8), 9.9) և 9.10) կետեր:
- «Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» (2022), Հավելվածի ներածության չորրորդ պարբերություն, Հավելվածի 1-ին, 2-րդ, 32-րդ, 37-րդ, 38-րդ, 69-րդ, 70-րդ կետեր, 81-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «ե», 3-րդ ենթակետի «բ», «դ», «է»-«ժ», 5-րդ ենթակետի «գ», 82-րդ կետի 4-րդ ենթակետի «գ», 86-րդ կետի 20-րդ ենթակետ:
- «Կամավոր աշխատանքի մասին» (2023), Հոդված 5, 1-ին մասի 5) կետ:

[8] ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին հայեցակարգ, ՀՀ կառավարության 14.02.2006 թ-ի նիստի N 50 արձանագրային որոշում, https://www.irtek.am/views/act.aspx?aid=37587 [20.12.2023]

[9] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 25 դեկտեմբերի 2014 թ. N 54 արձանագրային որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96116 [20.12.2023]

[10] ՀՀ օրենքը կրթության մասին, Հոդված 3-ի 1.4-րդ կետ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166466 [20.12.2023]

Ազգային ժողովի որոշումներ

- Հայաստանի Հանրապետության կառավարության հնգամյա (2021-26) ծրագիր, «4.7 Երիտասարդություն» բաժնի չորրորդ կետ և «4.9 Մշակույթ» բաժնի առաջին կետի ութերորդ ուղղություն:

ՀՀ կառավարության որոշումներ

- «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» (13.05.2021, N 744-Ն), Հավելված, 9-րդ մասի 4) կետ:
- «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին (16.03.2023, N 351-L), Հավելված N1, էջ 48, «Ոչ ֆորմալ կրթություն», Հավելված N2, էջ 38, «Ոչ ֆորմալ կրթություն»:
- «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը» սահմանելու մասին (10.09.2015, N 1062-Ն):

Սակայն կան նաև բավական լուրջ բացեր, օրինակ, չնայած կա ոչ ֆորմալ կրթությանն առնչվող ՀՀ կառավարության համապատասխան որոշում[11] ու ոլորտային նախարարի հրաման[12], բայց գործնականում, ոչ ֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման համակարգը լիարժեք չի գործում:

2023 թ. դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում ոչ ֆորմալ ուսուցման վերաբերյալ գիտելիքի ու փորձի վրա հիմնված, համընդհանուր, արդյունավետ ու չափելի կերպով գործող պետական քաղաքականություն ձևակերպված չէ:

ՔՀԿ-ների դերը ոչ ֆորմալ ուսուցման տարածման ու զարգացման մեջ

Հայաստանում ոչ ֆորմալ ուսուցման զարգացման գործում ամենաէական դերը խաղում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, որոնք առավելապես ներգրավված են համայնքային և երիտասարդական կրթական ծրագրերի իրականացման աշխատանքներում: Ֆորմալ կրթության համեմատ, ոչ ֆորմալ կրթություն մատուցողներն ավելի անհատականացված ուսուցման տարածք են կարողանում ապահովել, որոշ դեպքերում նաև հասնելով այն երիտասարդներին, որոնց ֆորմալ համակարգի մանկավարժները չեն կարողանում հասնել: Սա ներառում է մարգինալացված և խոցելի խմբերի երիտասարդներին, ովքեր փոփոխվող աշխատաշուկայում մրցակցությունից հետ մնալու ամենամեծ վտանգի տակ են: Ոչ ֆորմալ կրթություն մատուցողները, հետևաբար, կարող են կարևոր դեր խաղալ ապագայի

[11] Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգ, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգ, ՀՀ կառավարության 10.09.2015 թ-ի N 1062-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100589 [20.12.2023]

[12] Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկ, ՀՀ ԿԳ նախարարի 05.02.2016 թ-ի N 83-Ն հրաման, https://www.arlis.am/documentview.aspx?docID=104160 [20.12.2023]

հնարավորությունների անհավասարությունը նվազեցնելու, ինչպես նաև ֆորմալ կրթություն մատուցողների հետ գիտելիքների և լավագույն փորձի փոխանակման գործում[13]:

Սակայն ՔՀԿ-ների դերն ամբողջությամբ գնահատելու առումով ևս կան խոչընդոտներ. հստակ տեղեկատվություն չկա, թե ՀՀ-ում գրանցված 8 165 ՔՀԿ-ից (ՀԿ-ներ ու հիմնադրամներ, որոնց քանակը 10 000 բնակչի հաշվով մոտ 27 է) քանի՞սն են իսկապես ակտիվ գործում: Ուստի դժվար է գնահատել նաև, թե քաղաքացիական կրթության ու երիտասարդների առաջնորդական հմտությունների զարգացման ուղղությամբ այդ ՔՀԿ-ներից քանի՞սն են կոնկրետ ծրագրեր ու գործունեություն իրականացնում կամ հավելյալ արժեք ստեղծում կրթական գործիքների, մեթոդաբանությունների տեսքով, որքանո՞վ են դրանք որակյալ, կայուն ու շարունակական:

Պետական ռեգիստրի տարեկան հաշվետվություն[14]	Հասարակական կազմակերպություն	Հիմնադրամ	Ընդամենը
31.12.2023 թ. դրությամբ ՀՀ-ում գրանցված (հաշվառված) են՝	6 469	1 696	**8 165**
01.01 - 31.12.2023 թ. սկզբնական գրանցումների (հաշվառումների) քանակը՝	427	104	**531**

Աղյուսակ 1. ՀՀ-ում գրանցված ՔՀԿ-ների թիվը 31.12.2023 թ. դրությամբ

Քաղաքացիական կրթությունը Հայաստանում

Քաղաքական կամ քաղաքացիական կրթությունը (citizenship education) դիտարկվում է որպես ժողովրդավարության հասկացման և քննադատական գնահատման միջոց: Քաղաքացիական կրթության միջոցով երիտասարդներին է փոխանցվում, թե ինչպես է գործում քաղաքական համակարգը, ինչպես են կայացվում որոշումները, ինչպես կարելի է մասնակցել դրանց: Նաև հնարավորություն է տալիս, որպեսզի երիտասարդները կարողանան հարցականի տակ դնել, քննադատել այդ համակարգը և գործընթացները[15]:

Ներդիր 2. Քաղաքացիական կրթության վերաբերյալ դրույթներ բովանդակող ՀՀ իրավական ակտերի ցանկ՝

ՀՀ օրենքներ

- «Կրթության մասին» (1999) Հոդվածի 4, 2-րդ մաս, Հոդվածի 5, 1-ին մաս, Հոդված 11, Հոդված 17, 1-ին մաս, Հոդված 18, 1-ին և 2-րդ մասեր:

[13] The future of work, Policy Paper, Council of Members // Extraordinary General Assembly Amiens, France 22-23 November 2019, https://www.youthforum.org/files/0096-19_COMEM20II-19_Policy_Paper_Future_of_Work_FINAL.pdf [20.12.2023]

[14] ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգ, 2023 թվականի հաշվետվություն, https://www.e-register.am/am/docs/694 [31.12.2023]:

[15] Մարինա Գալստյան, ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալումներ և պրակտիկաներ, Վերլուծական տեղեկագիր (ՔՄՀԿ) 16 (2023): 55-78 DOI: 10.56673/18294502-23.16-79, էջ 95:

- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (2004) Հոդված 11, 1), 6) և 8)-րդ կետեր, Հոդված 19, 6-րդ մասի 3) կետ:
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (2005) Հոդված 10, 4-րդ մասի 1) կետ:
- «Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» (2022), Հավելվածի 76-րդ կետ, 77-րդ կետի 1-ին ենթակետ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններ

- «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին» (30.03.2023, N 32-Ն),
- «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ և 11-րդ դասարանների «Հասարակագիտություն» առարկայի ծրագրերը հաստատելու մասին» (03.07.2023, N 81-Ն):

Քաղաքացիական կրթություն երիտասարդները հնարավորություն ունեն ստանալու ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջոցով: Ֆորմալ կրթության շրջանակում՝ հայաստանյան դպրոցներում, քաղաքացիական կրթության թեմատիկային առավելագույնս առնչվող նյութը դասավանդվում է «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում: Դեռահասներն այն սկսում են ուսումնասիրել միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանից սկսած[16] [17]:

Բնականաբար ոչ ֆորմալ ուսուցման շրջանակում հնարավորություններն ավելի լայն են: Քաղաքացիական հասարակության բազմաթիվ կառույցներ պարբերաբար տեղական ու միջազգային տարբեր դասընթացներ, ակումբներ ու ծրագրեր են իրականացնում, որոնց մասնակցում են թե՛ դեռահասներ, թե՛ երիտասարդներ, թե՛ երիտասարդների հետ աշխատող մասնագետներ:

Չնայած այս հնարավորություններին, թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ կրթության շրջանակում հիմնական աշխատանքը տարվում է տեսական գիտելիքների մատուցման ուղղությամբ, ինչն արդյունավետ չէ, քանի որ պարզապես գիտելիք փոխանցելը չի բերում վարքագծի և վերաբերմունքի փոփոխության, քանի որ անձի փոխակերպումն առանց գործնական, մասնակցային, քաղաքացիական բաղադրիչների արդյունավետ չէ: Սովորածը կիրառելու փուլում, մասնավորապես՝ քաղաքացիական մասնակցության համար, երիտասարդները կարիք ունեն գործնական գիտելիքների և հմտությունների[18]:

[16] ՀՀ ԿԳՄՍ նախարարի 30.03.2023 թ-ի N 32-Ն հրամանը հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176084 [20.12.23]

[17] ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.07.2023 թ-ի N 81-Ն հրամանը հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ և 11-րդ դասարանների «Հասարակագիտություն» առարկայի ծրագրերը հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180012 [20.12.2023]

[18] Մարինա Գալստյան, ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալումներ և պրակտիկաներ, Վերլուծական տեղեկագիր (ՔՄՀԿ) 16 (2023): 55-78 DOI: 10.56673/18294502-23.16-79, էջ 104:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ուսումնասիրության շրջանակում պետք էր վեր հանել երիտասարդների հատուկ կարիքները և խնդիրները, ինչը թույլ կտար ավելի լավ հասկանալ դրանց լուծմանն ուղղված քաղաքացիական կրթության ու առաջնորդության հմտությունների զարգացման գործիքների ու պրակտիկաների բացերը և հնարավորությունները:

ՀՀ վիճակագրական կոմիտեն իր հրապարակումներում մեզ հետաքրքրող տվյալներն, առայժմ, ներկայացնում է սույն ուսումնասիրության «Հիմնական հասկացություններ» բաժնում «Երիտասարդ» հասկացության բացատրությունում նշված տարիքային շեմերից մի փոքր տարբերվող խմբավորումներով: Համաձայն Կոմիտեի վիճակագրության, 2023 թ. տարեսկզբին Հայաստանում 15-29 տարեկան երիտասարդների թիվը կազմել է 533 551 (որը ՀՀ մշտական բնակչության 18% է), որից շուրջ 48,5%-ը՝ աղջիկներ, իսկ 51,5%-ը՝ տղաներ[19]: Ընդ որում, երիտասարդների շուրջ 40%-ը գյուղաբնակ է, իսկ 60%-ը՝ քաղաքաբնակ[20]:

ՀՀ-ում մշտական բնակվող երիտասարդների թվաքանակի բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի (01.01.2023 թ. դրությամբ)			
Ընդամենը երիտասարդների թիվ	**Նկարագիր**	**Քանակ երիտասարդների ընդհանուր թվից**	**Տոկոս երիտասարդների ամբողջ թվից**
533 551	15 - 19 տարեկան	~185 400	~35%
	20 - 24 տարեկան	~158 900	~30%
	25 - 29 տարեկան	~189 200	~35%
	Կին	~258 800	~48,5%
	Տղամարդ	~274 700	~51,5%
	Գյուղաբնակ	212 742	40%
	Քաղաքաբնակ	320 809	60%

Աղյուսակ 2. ՀՀ երիտասարդների թվաքանակի բաշխումը 01.01.2023 թ. դրությամբ

Կոմիտեի ներկայացրած ՀՀ տարիքային բուրգի 2012-2022 թթ. համեմատական վերլուծության համաձայն, շարունակում է կրճատվել հատկապես երիտասարդների թվաքանակը, մասնավորապես՝ 20-29 տարիքային խմբում[21]: Սա վերջին տասնամյակներում գրեթե անփոփոխ բացասական միտում է, ինչը վկայում է, որ Հայաստանն աստիճանաբար «ծերացող» հասարակության վերածվելու ռիսկի տակ է ու ժողովրդագրական հարցերը համակարգային լուծման կարիք ունեն:

[19] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2023, Մաս 2. Բնակչություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 45-46, https://armstat.am/file/article/demog_2023_2.pdf [27.12.2023]

[20] Նույն աղբյուրը, էջ 53-54:

[21] Նույն աղբյուրը, էջ 37:

Խնդիրներ ու կարիքներ, որոնք ուսումնասիրության ընթացքում վեր են հանել մասնակիցները.

Ա) Անվտանգային մարտահրավերներ, անորոշ ապագա

Ուսումնասիրության գրեթե բոլոր մասնակիցներն առաջնային խնդիրների շարքում նշել են տարածաշրջանային անկայունությունն ու անվտանգային մարտահրավերները, ինչի հետևանքով շատ են երիտասարդների ապագայի անորոշությունները:

Ասվածը փաստվում է նաև վերլուծական տեղեկատվությամբ. Երկրի առջև ծառացած խնդիրներից երիտասարդներն առավել կարևոր են համարում հարևան երկրների հետ հակամարտությունը, տարածքային ինտեգրումը և արտաքին քաղաքական լարվածությունները: Դրանց համեմատ նրանք երկրորդային են համարում այնպիսի սոցիալ-տնտեսական հարցերը, ինչպիսիք են գործազրկությունն ու աճող գները[22]:

Ինչպես արդեն նշեցինք, ուսումնասիրությունն իրականացվել է Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հանդեպ ռազմական գործողությունների ու հայաթափման ժամանակահատվածում: Այս պահին ՀՀ միջազգայնորեն ճանաչված մի շարք սահմանամերձ տարածքներ գտնվում են Ադրբեջանի վերահսկողության տակ: Արցախի հայաթափումն ու Ադրբեջանի շարունակվող ռազմատենչ հռետորաբանությունն ու քաղաքականությունն անմիջական ազդեցություն են ունենում Հայաստանում բնակվող երիտասարդների անվտանգային զգացողությունների վրա[23] [24]:

Անվտանգային հարցերի ազդեցությունը քննարկելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ երիտասարդների մի մասն անմիջականորեն մասնակցել է առնվազն 2010-ականների կեսից մինչ օրս տեղի ունեցող ռազմական բախումներին՝ որպես ժամկետային զինծառայող, պահեստազորային կամ կամավոր, իսկ որոշ մասն անմիջականորեն մասնակցել է թիկունքում տարվող աշխատանքներին: Ի հավելումն սրա, ներկայումս ՀՀ-ում գտնվող բռնի տեղահանված բոլոր արցախցի երեխաներն ու երիտասարդները կրել են ռազմական գործողությունների անմիջական ազդեցությունն ու եղել են դրանց ականատեսը:

Պատերազմների ազդեցությունը երիտասարդների վրա բնութագրվում է հոգեկան առողջության մի շարք խաթարումներով՝ տրավմա, հետտրավմատիկ սթրեսային խանգարում (PTSD), ապագայի հանդեպ վստահության նվազում[25]: Ըստ այդմ, տարածաշրջանում անվտանգային իրական մարտահրավերների, բազմաթիվ անորոշությունների պատճառով երիտասարդները դժվարանում են երկարաժամկետ պլաններ կազմել, ապագայի հետ կապված ակնկալիքներ ու ձգտումներ ունենալ:

---

[22] (Ան)կախության սերունդ-Հայաստան-2023, հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, 2023, էջ 7, https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20654.pdf [20.12.2023]

[23] Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, զեկույց, ԵՆԿ ՀԿ, 2021, էջ 32-33, https://yic.am/wp-content/uploads/2022/11/GYSA-2021_hy.pdf [20.12.2023]

[24] (Ան)կախության սերունդ-Հայաստան-2023, հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, 2023, էջ 99, https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20654.pdf [20.12.2023]

[25] The Role of Youth in Post-Conflict Reconstruction (The Case of Liberia), Marit Woods, SIT Graduate Institute, 2011.

Բ) Երիտասարդական պետական ու համայնքային քաղաքականությունների բացեր / բացակայություն

Ուսումնասիրության մասնակիցները նշել են, որ առկա են ոլորտային զգալի խնդիրներ, լուծումները համակարգային չեն, թույլ են զարգացած կամ բացակայում են ինստիտուտները, ենթակառուցվածքները, երիտասարդական քաղաքականության առկա բացերի պատճառով երիտասարդները ճանաչված չեն որպես սուբյեկտ: Ավելի հաճախ երիտասարդությունը դիտարկվում է որպես պրոբլեմ, ոչ թե հասարակության զարգացման հիմնական սոցիալական ռեսուրս ու զարգացման հիմնահարցերի լուծման սոցիալական մոդել:

Հսկայական անհամաչափություն կա երիտասարդների թվի (շուրջ 533 500) և առկա մեթոդների, աջակցող ծրագրերի, ֆիզիկական տարածքների ու երիտասարդական աշխատողների թվի միջև: Լավագույն դեպքում երիտասարդների միայն 10% է կազմակերպված (անդամակցում կամ կամավորություն է անում որևէ ՔՀԿ-ում, կամ մասնակցում է որևէ երիտասարդական ծրագրի, օգտվում որևէ երիտասարդական ծառայությունից): Երիտասարդների գերակշռող մեծամասնությունը կյանքում չի տեսել երիտասարդական աշխատանք: Եղած ռեսուրսների զգալի մասն էլ պրոֆեսիոնալ չէ, որ ի վիճակի լինի ծրագրերում ներգրավել նոր երիտասարդների:

Ներկա իրավիճակը փաստում է մասնակիցների պնդումները. Այսպես՝ դեռևս 2018-19 թթ. ՀՀ կառավարության կազմերի փոփոխությունների հետևանքով լուծարվել էին Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ը, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը, դադարեցվել էր ՀԿ-ների երիտասարդական ծրագրերի համար գործող պետական դրամաշնորհային՝ cragrer.am առցանց հարթակի գործունեությունը և այլն: Երիտասարդությանն առնչվող գործառույթներ փոխանցվել էին ԿԳՄՍ նախարարությանը: Միայն վերջերս՝ մի քանի կառուցվածքային փոփոխություն անցնելով, ԿԳՄՍ նախարարության կազմում այլ վարչություններից առանձնացվել ու սկսել է գործել «Երիտասարդության հարցերի վարչությունը»:

2022 թ. հունվարի 1-ին անվավեր ճանաչվեց այդ ժամանակվա ոլորտային գլխավոր իրավական ակտը՝ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025 թթ. հայեցակարգը[26]: Մշակված ու 2018 թ-ին նախագծային փուլում գտնվող ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. ռազմավարությունն այդպես էլ չընդունվեց: Ոլորտային դերակատարները ևս մեկ փորձ են արել 2020-21 թթ-ին՝ մշակելով ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարությունը[27], որը ևս հաստատում չի ստացել: Մի քանի տարի է ոլորտային քաղաքականությունը հիմնականում իրականացվում է ՀՀ կառավարության ծրագրերում ներառված դրույթներով ու դրանցից բխող՝ լիազոր մարմինների տարեկան ծրագրերով ու որոշումներով:

[26] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 25 դեկտեմբերի 2014 թ. N 54 արձանագրային որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96116 [20.12.2023]

[27] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարություն, նախագիծ, 2021, https://www.e-draft.am/projects/3268 [20.12.2023]

Չնայած շարունակել է գործել երիտասարդական աշխատողների վերապատրաստման ամենամյա պետական ծրագիրը, սակայն դրա որակի հետ կապված պարբերաբար ոլորտային դերակատարների մոտ հարցեր են առաջացել: Թե՛ վերապատրաստումների, թե՛ երիտասարդական ֆորումների, թե՛ այլ միջոցառումների իրականացման համար հայտարարված մրցույթները, հաճախ, եղել են պետական գնումների ընթացակարգով, ինչի պատճառով ՔՀԿ-ները դժվարացել են դիմել այդ մրցույթներին, իսկ հաղթած շահույթ հետապնդող կազմակերպությունների մեծ մասը եղել է ոչ ոլորտային, թեմաներին ու առանձնահատկություններին չտիրապետող:

Խնդիրն ավելի լուրջ է համայնքներում, որտեղ երիտասարդության հարցերն առավել հաճախ գտնվում են ՏԻՄ-երի ոչ պարտադիր, կամավոր լիազորությունների ու գործառույթների շրջանակում: Ուստի քաղաքականությունները, ծրագրերը, միջոցառումներն ու ֆինանսավորումը ավելի հաճախ դիպվածային ու անձնավորված են, քան թե՝ համակարգված: Բազմաթիվ համայնքներում բացակայում են ոչ միայն երիտասարդական կենտրոնները, այլև թե՛ սպառողական, թե՛ ինքնագործունեության, ստեղծարարության համար նախատեսված ազատ ժամանակի կազմակերպման հնարավորությունները: Եթե կարճ, ապա երիտասարդի ինքնության ձևավորման հնարավորություն համայնքների մեծ մասում չկա:

Բայց կան նաև հուսադրող գործողություններ. 2023 թ. նոյեմբերի 6-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 1419-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ ու հաստատվել է «Երիտասարդության մասին» օրենքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի աշխատակարգ: Նախատեսված է օրենքը մշակել մինչև 2024 թ. մարտ-ապրիլ ամիսներին: Ակնկալիք կա, որ իրավական բացերի կարգավորումը նպաստելու է պետական քաղաքականության ավելի լիարժեք ու արդյունավետ իրականացմանը:

ՔՀԿ-ների մասով. մասնակիցները նշում են, որ շատ ՔՀԿ-ներ թե՛ իրենց, թե՛ երիտասարդների կարիքների ճիշտ գնահատում չեն անում (կամ չեն կարող անել): Շատ դեպքերում ծրագրերի թիրախը ճիշտ չեն ընտրում: Տեղեկատվության փոխանակումը թույլ է զարգացած, ինչի պատճառով հաճախ նույն համայնքում, նույն խմբի համար նույնանման, նույնաբովանդակ ծրագրերի խաչաձևում է տեղի ունենում: Նրանց զգալի մասը ուշադրություն չի դարձնում իր անձնակազմի վերապատրաստումների վրա: ՔՀԿ-ներում հազվադեպ են հանդիպում գործունեության ու ազդեցության գնահատման համակարգերը, ռեֆլեկսիայի մշակույթը: Այս ամենը բերում է երիտասարդական աշխատանքի ու ծրագրերի ոչ բավարար արդյունավետության:

Գ) Սոցիալ-տնտեսական խոցելիություն

Ուսումնասիրության մասնակիցները, որպես կարևորագույն մեկ այլ հիմնախնդիր, նշել են երիտասարդների սոցիալ-տնտեսական խոցելիությունը, մասնավորապես՝ գործազրկության, մեծահասակներից կախվածության, ներքին ու արտաքին միգրացիայի խնդիրները:

Նշված խնդիրները հիմնավորվում է նաև վերլուծություններով: Այսպես, ՀՀ պետական վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալներով[28] 2022 թ-ին 15-29 տարեկանների թիվը եղել է շուրջ 515 000, որից միայն շուրջ 181 900 (մոտ 35%) երիտասարդն է ունեցել զբաղվածություն, մնացած գերակշռող մեծամասնությունը կամ եղել է գործազուրկ (մոտ 10%-ը), կամ գտնվել է աշխատուժից դուրս (եղել է սովորող, տնտեսություն վարող և այլն) (մոտ 55%-ը):



Գծապատկեր 5. 15-29 տարեկան աշխատանքային ռեսուրսներն ըստ խմբերի

Բարձր է նաև կրթությունից կամ ուսուցումից դուրս մնացած և զբաղվածություն չունեցող երիտասարդների թիվը: Խնդիրը նրանում է, որ տևական ժամանակ այդ կարգավիճակում գտնված երիտասարդներն առավել նվազ հնարավորություն ունեն զբաղված դառնալու կյանքի հետագա տարիներին:

Աշխատանքային զբաղվածություն չունեցող, չսովորող կամ ուսուցում չանցնող (NEET[29]) երիտասարդներն ըստ տարիքային խմբերի (2022 թ. դրությամբ)[30]					
	Ընդամենը	**Տղամարդ**	**Կին**	**Քաղաք**	**Գյուղ**
15-19 տարեկան	14 100	7 100	7 000	8 300	5 800
20-24 տարեկան	48 800	16 300	32 600	27 100	21 800
25-29 տարեկան	70 700	18 300	52 300	42 600	28 000
Ընդամենը	**133 600**	**41 700**	**91 900**	**78 000**	**55 600**
%-ով ընդհանուր երիտասարդների նկատմամբ	**25.9%**	**15.7%**	**36.8%**	**24.6%**	**28.1%**

Աղյուսակ 3. Չսովորող և չաշխատող երիտասարդներն ըստ տարիքային խմբերի

[28] Աշխատանքի շուկան Հայաստանում. 2023, 9-րդ մաս, Երիտասարդություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 331, https://armstat.am/file/article/lab_market_2023_9.pdf [29.12.2023]

[29] Not in Education, Employment, or Training

[30] Աշխատանքի շուկան Հայաստանում. 2023, 9-րդ մաս, Երիտասարդություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 340, https://armstat.am/file/article/lab_market_2023_9.pdf [29.12.2023]

Երիտասարդների շրջանում գործազրկությունը խոցելի է դարձնում նրանց ֆինանսական անկախության, կենցաղային անկախության և որպես հետևանք նաև մտավոր անկախության տեսանկյունից:

Պետք է նշել, որ ֆինանսական անկախությունը և տնտեսական ակտիվությունը սերտորեն կապված են, այսինքն՝ ինչքան երիտասարդը ավելի ակտիվ է տնտեսապես, այնքան նա ավելի անկախ է ֆինանսապես: Սակայն տնտեսական ակտիվությունը չի պայմանավորում երիտասարդի ֆինանսական անկախությունը մարզային քաղաքում կամ գյուղում: Օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղված երիտասարդը կարող է ֆինանսական առումով անկախ չլինել:

Թեման կարելի է ամփոփել Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի կողմից իրականացրած ներկայացուցչական հետազոտությամբ վեր հանված պատկերով. հայ երիտասարդները հակված են իրենց սոցիալ-տնտեսական վիճակը գնահատելու լավ՝ մյուսների համեմատ թե՛ իրենց համայնքում, թե՛ երկրում: Միևնույն ժամանակ իգական սեռի ներկայացուցիչներն իրենց սոցիալ-տնտեսական վիճակն ավելի ծանր են գնահատում, քան արական սեռի ներկայացուցիչները: Երիտասարդների միայն 1/3-ն ունի անձնական եկամուտ, 1/4-ը կախված է ծնողներից, և նույնիսկ աշխատողների 1/4-ը ֆինանսապես կախված է մեկ այլ անձից (սովորաբար ամուսնու ծնողներից): Երիտասարդների շրջանում իգական սեռի ներկայացուցիչները և գյուղաբնակները ֆինանսապես ամենակախվածն են: Քաղաքի երիտասարդներն ավելի հաճախ են ընդունվում ուսումնական հաստատություններ, քան գյուղական բնակավայրերում: Երիտասարդների գրեթե կեսը զբաղված է, իսկ արական սեռի ներկայացուցիչներն ավելի շատ են ներգրավված աշխատաշուկայում: Ուսումնական հաստատություններ չհաճախողների (չսովորողների) և չաշխատող երիտասարդների մեծամասնությունը իգական սեռի ներկայացուցիչներ են, ովքեր գյուղական բնակավայրերից են և ամուսնացած:[31]

Դ) Կրթական հիմնախնդիրներ

Ուսումնասիրության մասնակիցները, որպես խիստ կարևոր մեկ այլ հիմնախնդիր, նշել են ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության բացերը: Մասնավորապես շեշտվել է, որ թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ կրթությունը շատ հաճախ մատչելի ու հասանելի չէ երիտասարդների համար: Ֆորմալ կրթության որակը հիմնականում բավարար չէ, կրթական ծրագրերը սովորաբար հետաքրքիր չեն: Բուհական ծրագրերը հաճախ թույլ են, հավասարվել կամ կրկնում են դպրոցական մակարդակը: Դիպլոմը ոչ մի արժեք չունի: Կրթության բովանդակության ու իրական կյանքի (աշխատաշուկայի) կապը թույլ է: Թույլ է զարգացած մասնագիտական կողմնորոշման համակարգը: Սովորաբար երիտասարդական դասընթացները, կրթական ծրագրերը դիպվածային են, երկարաժամկետ, շարունակական ու կայուն չեն: Քիչ է պատահում, որ դրանք լինեն երիտասարդների ու համայնքների կարիքների ուսումնասիրության հիման վրա: Մյուս կողմից մասնակիցների մոտ

[31] (Ան)կախության սերունդ-Հայաստան-2023, հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, 2023, էջ 7, https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20654.pdf [20.12.2023]

զգացողություն կա, թե երիտասարդները չեն հասկանում ինչ են ուզում իրենց կյանքից ու, ըստ այդմ՝ չեն պատրաստվում:

Մեկ այլ խնդիր է այն, որ թե՛ որոշում կայացնողները, թե՛ ֆորմալ կրթական համակարգի ներկայացուցիչները, թե՛ (որքան էլ տարօրինակ թվա) ՔՀԿ-ների զգալի մասը լավ չի պատկերացնում, թե ինչ է ոչ ֆորմալ կրթությունը: Ավելի շուտ ունի թյուր կարծիք: Ըստ այդմ, գուցե շատերն են գործիքներ օգտագործում, բայց նպատակներ, սկզբունքներ ու մեթոդաբանություն շատ քչերն են կիրառում և քչերն են որակ ապահովում:

Բավական թարմ հետազոտություններն ավելի լայն պատկեր են տալիս. Երիտասարդների ճնշող մեծամասնությունը (94.4%), որոնց տարիքը համընկնում է միջնակարգ դպրոցի տարիքի հետ, հայտնում է, որ սովորում է ֆորմալ ուսումնական հաստատություններում: Դրա համեմատ, 18-24 տարեկան երիտասարդների ավելի քիչ թիվն է որևէ տեղ սովորում (39.1%): Ավելի բարձր տարիքային խմբերում (25-29 տարեկան), միայն 7.1%-ն է հայտնում, որ հաճախում է ուսումնական հաստատություն: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս նաև, որ մայրաքաղաքի և այլ քաղաքային բնակավայրերի երիտասարդներն ավելի հաճախ են սովորում ուսումնական հաստատություններում (համապատասխանաբար 42.4% և 41.9%), քան գյուղական բնակավայրերում (33.6%): Սովորելու հավանականությունը գրեթե հավասար է տղամարդ և կին հարցվողների դեպքում: Ամուսնացածների համեմատ (4.5%) ավելի մեծ թվով չամուսնացած երիտասարդներ են սովորում (40.5%): Գործազուրկ երիտասարդներն ավելի հավանական է, որ ներգրավված կլինեն կրթության մեջ (46.6%), քան նրանք, ովքեր որոշակի զբաղվածություն ունեն (27.1%):[32]

Հաջորդ խնդիրը վերաբերում է ՀՀ մասնագիտական կողմնորոշման համակարգի ոչ արդյունավետ գործառնությանը: Երիտասարդների կողմից բարձրագույն կրթության առկայությունը ներկայումս դիտարկվում է որպես որոշակի պարտադիր պայման, անհրաժեշտություն: Ընդ որում, դպրոցը դիտվում է որպես նախապատրաստական փուլ ԲՈՒՀ ընդունվելու համար, իսկ բարձրագույն կրթությունը դիտարկվում է որպես կյանքում հաջողության հասնելու պարտադիր պայման:

Պրակտիկան ցույց է տալիս, որ Հայաստանում մասնագիտական կրթությունը չի նպաստում երիտասարդների զբաղվածությանը՝ երիտասարդները ստանում են այնպիսի մասնագիտություններ, որոնց իրացման համար հայաստանյան աշխատաշուկայում կան մի շարք խոչընդոտներ կամ դրանք ուղղակի պահանջված չեն:

Հայաստանում կրթություն-աշխատաշուկա կապի ապահովման արդյունավետ մեխանիզմների պակասը պայմանավորված է մի քանի գործոնով: Դրանցից հիմնականն այն է, որ ուսումնական հաստատությունները, սովորաբար, գործատուներին մասնակից չեն դարձնում կրթության կազմակերպման և բովանդակության մշակման գործընթացներին:[33]

[32] Նույն աղբյուրը, էջ 22

[33] Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք, Մ. Գալստյան, Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում, Ուսումնական նյութերի ժողովածու, ԵՊՀ, 2018, էջ 120, http://publishing.ysu.am/files/Metsahasakneri_krtutyun.pdf [20.12.2023]

Կրթություն-աշխատաշուկա կապի մեկ այլ ցուցանիշ է զբաղված երիտասարդների աշխատանքի և մասնագիտական կրթության կապը: Մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդների զգալի մասն աշխատում է ոչ իր մասնագիտությամբ: Իսկ զբաղված երիտասարդների զգալի մասն էլ ցանկանում է փոխել իր մասնագիտացումը:

Հաջորդ էական խնդիրն այն է, որ միայն մասնագիտական կրթությունը բավական չէ աշխատանք գտնելու համար, քանի որ ուսումնական հաստատություններում քիչ ուշադրություն է դարձվում, այսպես կոչված, փափուկ / ճկուն կամ սոցիալական հմտությունների (Soft skills) զարգացմանը՝ հաղորդակցական, կառավարչական և այլ անձնային հմտություններին, ինչը գործատուների կողմից պահանջված որակներ են[34]: Այնինչ, նույնիսկ ամուր, մասնագիտական կամ տեխնիկական հմտություններն են (Hard skills) ուսումնական հաստատություններում զարգանում մասնակիորեն, սակայն այսօրվա աշխատաշուկան մասնագետից պահանջում է լինել ճկուն և բավական պատրաստված:

Ե) Քաղաքական, քաղաքացիական ոչ լիարժեք մասնակցություն

Ուսումնասիրության մասնակիցները, որպես մեկ այլ հիմնախնդիր, նշել են երիտասարդների քաղաքական ու քաղաքացիական մասնակցության ոչ բավարար լինելը: Մասնավորապես նրանք շեշտել են, որ երիտասարդների մասնակցությունը սովորաբար կրում է դեկլարատիվ և ձևական բնույթ: Իսկ թվային քաղաքացիությունը, թվային մասնակցությունը դեռ սաղմնային փուլում է: Մասնակիցները զգացողություն ունեն, որ երիտասարդներն իրենք իրենց ապագայի համար պատասխանատու չեն, երիտասարդները չեն ուզում ու չգիտեն ինչի համար քաղաքական ակտիվություն ցուցաբերեն: Երիտասարդներն իրենք իրենց չեն համարում որոշում կայացնողների վրա ազդողներ: Իրենց չեն տեսնում համայնքի մաս:

Երիտասարդական ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնանում են երիտասարդների քաղաքական մասնակցության 3 ձևերի վրա՝

- ինստիտուցիոնալ ներգրավվածություն (ընտրություններ, քարոզարշավներ, անդամակցություն քաղաքական կառույցներին, միավորումներին),
- ակտիվիզմ (ցույցեր, սոցիալական շարժումներ, բողոքի ակցիաներ, բոյկոտ և այլն),
- քաղաքացիական մասնակցություն (համայնքային ներգրավվածություն, կամավորական աշխատանք և այլն)[35]:

Սովորաբար երիտասարդներն իրենց քաղաքական մասնակցությունը սկսում են տեղական (համայնքային) մակարդակից, որտեղ նրանք հնարավորություն ունեն տեսնելու իրենց մասնակցության ուղիղ ազդեցությունը:

[34] Future of Jobs, Insight report may 2023, World Economic Forum, p 38-40, https://www3.weforum.org/docs/WEF_Future_of_Jobs_2023.pdf [20.12.2023]

[35] Youth Political Participation: Literature review, Youth Partnership, Galstyan, M., 2019, p. 5, https://pjpeu.coe.int/documents/42128013/47262631/Youth-Political-participation_Lit+review_BRIEF_FINAL.pdf [20.12.2023]

Սակայն մասնակցության համար կան մի շարք խոչընդոտներ. Երիտասարդները նշում են, որ բավականին պասիվ են քաղաքականորեն և տարբեր մակարդակներում որոշումների կայացման մեջ, քանի որ ունեն իրազեկվածության ու գիտելիքի պակաս քաղաքական համակարգի, քաղաքականության, դրանցում երիտասարդների դերի վերաբերյալ, ինչպես նաև փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակ ու մոտիվացիայի պակաս[36]:

Հաջորդ պատճառը երիտասարդների անվստահությունն է քաղաքական կառույցների հանդեպ: Երիտասարդների մեծ մասը կարծում է, թե չի կարող ազդեցություն ունենալ որոշումների կայացման վրա: Որոշները նույնիսկ աննպատակ են համարում նման ազդեցությունը:

2022 թ. անցկացված համապետական ներկայացուցչական հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ, Հայաստանի երիտասարդների մեծ մասը քաղաքական անտարբերություն է ցուցաբերում: Հարցվածների գրեթե 2/3-ն ասել է, որ իրենք ընդհանրապես չեն հետաքրքրվում քաղաքականությամբ (59.1%): Տվյալները ցույց են տալիս, որ բարձրագույն կրթությամբ հարցվածները (ներառյալ թերի բարձրագույն) համեմատաբար ավելի քիչ են հայտնել, որ իրենք չեն հետաքրքրվում քաղաքականությամբ (52.1%), քան նախնական, ոչ լրիվ և ավարտած միջնակարգ կրթություն ունեցողները (63.1%): Հետաքրքիր է, որ մինչև 17 տարեկան հարցվածներն ավելի քիչ են քաղաքականապես անտարբեր (54.7%), քան ավելի բարձր տարիքային խմբերի մարդիկ (61.5% և 62.1%): Ակնհայտ է նաև, որ մայրաքաղաքի երիտասարդներն ավելի շատ են անտարբեր քաղաքականության նկատմամբ (65.3%), քան այլ քաղաքներում և գյուղերում (57.3% և 60.0%):[37] Քաղաքականությամբ ընդհանրապես չհետաքրքրվողները 18-29 տարեկան կանայք են, ովքեր ապրում են Երևանում: Երիտասարդների միայն 15.6%-ն է դժվարացել աջ կամ ձախ գաղափարախոսության տեսանկյունից խոսել, իսկ 29.4%-ը իր կարծիքն արտահայտել է ծայրահեղ բևեռների տեսանկյունից: Երիտասարդները ավելի շատ նախընտրում են ներդրում կատարել հասարակական կամ քաղաքական կազմակերպություններում և մասնակցել համայնքային խնդիրների լուծմանը, քան ֆորմալ քաղաքական ներգրավվածություն ունենալ:[38]

Քաղաքական անտարբերության խորքային պատճառները լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք ունեն, քանի որ, որոշ հետազոտական տվյալներ ցույց են տալիս, որ երիտասարդների զգալի հատված հետաքրքրված է երկրին ու իր համայնքին վերաբերող քաղաքական իրադարձություններով, խնդիրներով: Նրանք պատրաստ են առաջարկներ ներկայացնել ու մասնակցել դրանց լուծմանը, բայց դա անելու հնարավորություն չեն տեսնում[39]: Վստահորեն

[36] Մարինա Գալստյան, ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալումներ և պրակտիկաներ, Վերլուծական տեղեկագիր (ՔՄՀԿ) 16 (2023): 55-78 DOI: 10.56673/18294502-23.16-79, էջ 104:

[37] (Ան)կախության սերունդ-Հայաստան-2023, հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, 2023, էջ 33, https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20654.pdf [20.12.2023]

[38] Նույն աղբյուրը, էջ 29

[39] Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, զեկույց, ԵՆԿ ՀԿ, 2021, էջ 24, https://yic.am/wp-content/uploads/2022/11/GYSA-2021_hy.pdf [20.12.2023]

կարելի է պնդել, որ հնարավորությունների պակասը անտարբերության մղող էական գործոններից մեկն է:

Կամավորություն. Հետաքրքիր է նաև դիտարկել երիտասարդների կամավորական ներգրավվածությունը. Համապետական ներկայացուցչական հարցման տվյալներով, երիտասարդների միայն 15.9%-ն է վերջին տարում կատարել որևէ տեսակի չվճարվող կամավորական աշխատանք: Բարձրագույն կրթությամբ չամուսնացած տղամարդիկ ամենաշատն են ներգրավված կամավորական աշխատանքում: Տղամարդ հարցվողներն ավելի հակված են ներգրավվելու կամավոր աշխատանքներում (17.3%), քան կանայք (14.5%), իսկ միայնակները մի փոքր ավելի շատ են չվճարվող կամավորական աշխատանք կատարել (18.1%), քան ամուսնացածները (10.2%): Լրիվ կամ թերի բարձրագույն կրթություն ունեցողների մոտ մեկ քառորդը զբաղվել է որոշակի կամավորական աշխատանքով, մինչդեռ նախնական թերի կամ ամբողջական միջնակարգ կրթություն ունեցողները մոտ երկու անգամ ավելի քիչ են ներգրավված եղել կամավորական աշխատանքներում:[40]

Տվյալները ցույց են տալիս, որ կամավորների մոտ մեկ քառորդը (26.1%) կամավորությամբ զբաղվել են դպրոցում կամ համալսարանում, և մոտավորապես յուրաքանչյուր հինգերորդը՝ հասարակական կազմակերպություններում: Տասից մեկը կամավոր է եղել ասոցիացիաներում, ինքնակազմակերպվող նախագծերում կամ երիտասարդական կազմակերպություններում: Հարցվածների մոտ 5%-ը նշում է, որ կատարել է չվճարվող աշխատանք քաղաքացիական նախաձեռնություններում, փրկարար ծառայություններում կամ քաղաքական կուսակցություններում: Արհեստակցական միություններում կամավոր աշխատողների համամասնությունը գրեթե բացակայում է (0.3%):[41]

[40] (Ան)կախության սերունդ-Հայաստան-2023, հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, 2023, էջ 25, https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20654.pdf [20.12.2023]

[41] Նույն աղբյուրը, էջ 26

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՑԱՆԿ

Ստորև ներկայացվում են քարտեզագրման արդյունքում դուրս բերված մի քանի խումբ ռեսուրսներ, որոնք առնչվում են ոչ ֆորմալ կրթության, և/կամ քաղաքացիական կրթության, և/կամ առաջնորդության թեմաներին: Բնականաբար, կարող է մի շարք ռեսուրսներ մեր տեսադաշտից վրիպած լինեն, սակայն որոնումը արվել է հնարավորինս մանրակրկիտ: Հուսով ենք, այն բավականաչափ ամբողջական է:

Ցանկում որոնումը հեշտացնելու նկատառումով նպատակահարմար է համարվել տվյալները ենթաբաժիններում դասավորել այբբենական կարգով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ

ԱՐԼԻՍ. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի միասնական կայք:

ՀԿ Դեպո պորտալ. ստեղծվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից: Հարթակը պարունակում է տեղեկատվություն շուրջ 260 տեղական կազմակերպության մասին: Հնարավորություն է տալիս նաև ավելացնել հարթակում բացակայող կազմակերպությունները:

ՀՀ իրավական նախագծերի հրապարակման միասնական e-draft հարթակ:

ՀՀ պետական ռեգիստր. պարունակում է ՔՀԿ-ների մասին գրանցված հիմնական տեղեկատվությունը (անուն, ստեղծման ամսաթիվ, հարկային գրանցման համար), իսկ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ վճարովի հիմունքներով:

ՀՀ վիճակագրական կոմիտե. պաշտոնական հետազոտությունների ու վիճակագրական տվյալների շտեմարան:

ՔՀԿ քարտեզ. ստեղծվել է ՀԿ Կենտրոն քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից: Ինտերակտիվ քարտեզի վրա կարելի է գտնել ՀՀ-ում գործող ՔՀԿ-ներին, տեսնել դրանց մասին համառոտ տեղեկատվություն ու կոնտակտները և ավելացնել նոր կազմակերպություն:

Նշվածները, չնայած, բավականաչափ կարևոր տեղեկատվություն են մշակում ու ներկայացնում, սակայն ունեն որոշակի խնդիրներ / բացեր: Օրինակ, ՔՀԿ-ների մասին տեղեկատվությունը հաճախակի ստուգելու ու թարմացնելու կարիք ունի: Չափազանց դժվար է առանձնացնել ակտիվ ու պասիվ ՔՀԿ-ներին: Վիճակագրական կոմիտեի կայքից ու դրանում առկա տեղեկատվությունից օգտվելը որոշակի հմտություններ են պահանջում: Այնտեղ վարվող ոլորտային վերլուծությունը առաջիկայում պետք է համապատասխանեցվի երիտասարդական քաղաքականության պահանջներին: Իսկ պետական ռեգիստրի գործակալությունից ավելի լայն տեղեկատվություն ստանալը վճարովի է (նախատեսված է պետական տուրքի վճարում):

ՀԱՐԹԱԿՆԵՐ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից տրամադրվող հնարավորություններ:

Ինովարիում նախագիծ. նպատակն է երիտասարդների քաղաքացիական գիտակցության մակարդակի բարձրացումը:

ԻնֆոՏուն, ցանց:

ԿԱԶԱ հիմնադրամի էլեկտրոնային ուսուցման հարթակ:

Կամավոր.հայ հարթակ. երիտասարդներին, ովքեր ցանկանում են անհատապես կամ խմբերով հանդես գալ համայնքային կյանքի զարգացման որևէ նախաձեռնությամբ և արդյունավետ կերպով կատարել այդ աշխատանքը, հնարավորություն է տալիս ստանալ կամավորական աշխատանքի սերտիֆիկատ՝ ըստ հարթակի կողմից նախապես սահմանված պահանջների և սկզբունքների:

Կանայք հանուն աշխատանքային իրավունքների ցանց:

Հավասար ինֆոհաբ. տեղեկատվական հարթակում ամփոփված են փաստաթղթեր, հրապարակումներ, տեղեկատվական և ուսուցողական նյութեր, որոնք վերաբերում են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներին և հավասար հնարավարություններին:

Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների միություն ՀԿ (YOU.Armenia). սկզբում գործել է Միություն երիտասարդական կազմակերպությունների անունով: Որպես իրավաբանական անձանց հասարակական միավորում, հիմնադրվել է 2023 թ. մարտին:

B4C բյուջեն քաղաքացիների համար՝ բյուջետային գիտելիքի փոխանակման Budgets.am էլեկտրոնային հարթակ, որը ստեղծվել է ՔՀԿ-ների և քաղաքացիների համար ու իր մեջ ներառում է ինչպես տեղեկատվական, այնպես էլ ուսումնական բաղադրիչներ:

Erasmus+ երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի տեղեկատվական կենտրոն:

Erit.am հարթակ. երիտասարդական նորությունների ու ռեսուրսների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պորտալ:

Euneighbours east. ներկայացվում է լուրեր ու տեղեկատվություն երիտասարդության հարցերի շուրջ Հայաստանի հետ Եվրոպական միության համագործակցության մասին:

Europe Youth Partnership Libraries. Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության առցանց գրադարանների հարթակ:

Good practices. Եվրոպայում կատարվող երիտասարդական աշխատանքի, քաղաքականության և հետազոտությունների լավ փորձը, վկայությունները և նմանատիպ այլ ձևաչափերը ներկայացնող նախագծերի հարթակ:

SALTO-YOUTH. յոթ ռեսուրս կենտրոններից բաղկացած եվրոպական ցանց է, որն աշխատում է երիտասարդության առաջնահերթ ոլորտներում: Տրամադրում է աջակցություն, առաջադեմ ուսուցման և վերապատրաստման հնարավորություններ երիտասարդների համար:

Your Opportunities առցանց հարթակներ, որտեղ նախաձեռնող խումբը պարբերաբար հրապարակում է տեղական և միջազգային տարաբնույթ հնարավորություններ:

Youth Work. երիտասարդական աշխատանքի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության առցանց հարթակ:

Չնայած հարթակների բազմազանությանը, սույն ուսումնասիրության բոլոր մասնակիցները նշել են, որ կարիք կա երիտասարդական միասնական ակտիվ ու արդյունավետ գործող առցանց հարթակի: Ինչ-որ չափով նման գործառույթ ունի Erit.am-ը, սակայն դա շատ հեռու է բավարար լինելուց: Հետաքրքրվածությունը մեծ է նաև ոլոտային համաժողովների, ֆորումների, տոնավաճառների ու նմանատիպ միջոցառումների նկատմամբ:

ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման Ուղեցույց, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, 2022:

Երիտասարդական աշխատանքի պրակտիկում, Ձեռնարկ, Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչություն, 2021:

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման և խաղաղության ոլորտում, Ձեռնարկ, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ, 2020:

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը. հնարավորություններ և եղանակներ, Դասընթացի մոդուլ, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ, 2022:

Երիտասարդների ներգրավումը համայնքի դիմակայունության գործընթացներում. Ուղեցույց ուսուցիչների և սովորողների համար, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, 2021:

Թվային ակտիվ քաղաքացիությունը տեղական համայնքներում, Դասընթացի ձեռնարկ, 2021:

Ժամանցային միջոցառումների հավաքածուի ուղեցույց. ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթական փաթեթի ձեռնարկ, 2013:

Ինչպես խոսել տեղական ժողովրդավարությունից, Ուղեցույց երիտասարդական աշխատողների համար, ՄԵՆՔ Լոռու մարզի երիտասարդական ՀԿ, 2022:

Կանանց ձեռներեցության և առաջնորդության զարգացում, Դասընթացի ձեռնարկ, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ, 2022:

Կառավարչական հմտություններ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ռ. Խաչատրյան, Ս. Հովհաննիսյան, Կ. Սարգսյան, Ա. Հովսեփյան, 2020:

Կրթապիտակները (Open Badges)՝ որպես թվային երիտասարդական աշխատանքի և ցկյանս ուսումնառության գործիք, 2020:

Հակակոռուպցիոն ակադեմիա. գործնական առաջադրանքների ժողովածու, Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան և ուրիշներ, 2022:

Հակակոռուպցիոն ակադեմիա. Դասընթացի ծրագիր, Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան և ուրիշներ, 2022:

ՀԿ Դեպո մոդուլներ, ներկայացված են մի շարք կրթական ռեսուրսներ:

Մեդիա iգիտություն, ուսումնական ձեռնարկ դասավանդողների համար, ՄՆԿ, 2022:

Մեդիա և տեղեկատվական գրագիտություն՝ սովորել չդադարողների համար. քայլ առ քայլ ուղեցույց, Հանրային լրագրության ակումբ:

Մեդիագրագիտության առցանց դասընթաց, ՄՆԿ:

Մեդիագրագիտության ինտեգրված դասի պլաններ և ուսումնական նախագծեր, ՄՆԿ:

Մեդիագրագիտության ձեռնարկներ դասավանդողների համար (6 հատ), ՄՆԿ:

Մեդիագրագիտություն արտադասարանական խմբակի օրինակելի ծրագիր 8-12-րդ դասարանների համար, ՄՆԿ, 2023:

Մեթոդական ձեռնարկ հասարակագիտություն առարկան դասավանդող ուսուցիչների համար, ԿԱՀ, 2020:

Ներառական կրթությունը գործնականում. ուսումնամեթոդական ձեռնարկ, Սյուզաննա Պետրոսյան, 2021:

Ոչ ֆորմալ ուսուցման և սիմուլյացիոն խաղերի վերաբերյալ կրթական գործիքակազմ, (անգլերեն), Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ, 2021:

Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2020:

Ուսուցչի օգնականի ձեռնարկ. Մեթոդական ուղեցույց, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2022:

Տեղական ժողովրդավարության դպրոց, ՏԺԴ ուսուցման հարթակներ - բազային ուսուցում:

Տվյալահեն քաղաքականությունների ձևավորման դասընթացի նյութեր:

Տրավմա և այլընտրանքային խնամք. տրավմայի մասին տեղեկացված մոտեցման կիրառման ներածություն:

Compasito - Manual for human rights education with children (3rd edition), 2021.

Compass - Manual for Human Rights Education with Young People (2nd edition updated in 2020), 2021.

Social Business Owner self-study կրթական ծրագիր:

The 40 Developmental Assets®, Framework, Search Institute®.

Չնայած կրթական մոդուլների ու ձեռնարկների առկայությանը, սույն ուսումնասիրության մասնակիցները շեշտել են, որ կարիք ունեն միասնական շտեմարանի, որտեղ ամբողջացած կլինեն առկա բոլոր հնարավոր ռեսուրսները, որը անընդհատ կհամալրվի ու որտեղ հասանելի կլինեն հայալեզու արդի մեթոդական գրականություն, ուղեցույցներ, կրթական մոդուլներ, օրինակելի պլաններ և այլն:

ՄՈԴԵԼՆԵՐ, ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԵՐ

Ապրիր երազանքդ կյանքի հմտությունների Ջինիշյան կենտրոն. հիմնվել է Ջինիշյան հիշատակի հիմնադրամի և Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության համատեղ ջանքերով:

Առաջնորդության դպրոց հիմնադրամ, նպատակներն են՝ նպաստել տարածաշրջանի զարգացմանը և այդ նպատակի շուրջ կենտրոնացած համայնքի ձևավորմանը, ինչպես նաև գործնական փորձառության հնարավորություն տրամադրել Առաջնորդության դպրոցի ուսանողներին:

Դասավանդի՛ր, Հայաստան, առաքելությունն է նվիրյալ առաջնորդների համազգային շարժման խթանումը՝ հանուն Հայաստանի բոլոր երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնման:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի դպրոցներ՝ ա) Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի, բ) Քննադատական մտածողության, գ) ՀԿ-ների կարողությունների զարգացման, դ) Տեղական ժողովրդավարության:

Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույց, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, 2022:

Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ, ԿԱՀԱ հիմնադրամ, 2017:

Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման ծրագիր, ԿԱՀ:

Երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոններ, մոդելն այս պահին գործում է ՀՀ 5 համայնքում, ԵՆԿ ՀԿ:

ՁԱՐԿ. ծրագրի նպատակն է նախապատրաստել ֆիզիկապես, հոգեպես, գիտելիքով պատրաստ որոշում կայացնող ապագա առաջնորդներ:

Լիբերալ քաղաքականության դպրոց:

Կանանց հզորացման ակադեմիա ծրագիր:

Կատարինե կանանց քաղաքական առաջնորդության ծրագիր:

Հակակոռուպցիոն ակադեմիա, իրականացնում է Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ-ն ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի հետ համատեղ 2020 թ-ից:

Հակակոռուպցիոն դպրոց, իրականացնում է Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ-ն 2019 թ-ից:

Հակակոռուպցիոն պարբերական դասընթացների շարք՝ կոռուպցիայի և լավ կառավարման վերաբերյալ տարբեր թեմաներով, իրականացնում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ:

ՀաՄաՏեղ (Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը) ծրագիր, նպատակն է բարձրացնել հանրային ներգրավվածությունը ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացում, քաղաքացիներին տրամադրել վստահելի տեղեկատվություն, հզորացնել քաղաքացիական հասարակությունը՝ արդյունավետ, հաշվետու և մասնակցային տեղական ինքնակառավարումը խթանելու համար:

Հայորդյաց տուն. ներկայումս ՀՀ-ում գործում է 8 կենտրոն, որոնք հիմնադրվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից: Հայորդյաց տներում ստացած կրթությունը սաներին օգնում է հետագա մասնագիտական ընտրության հարցում:

Հոդված 3, մարդու իրավունքների դպրոց:

ՄԱԿ-ի մոդել. գիտական համաժողովի և դերային խաղի համադրություն, որի ընթացքում ուսանողները և ավագ դասարանների սովորողները ՄԱԿ-ի մի քանի պաշտոնական լեզուներով վերարտադրում են այս կազմակերպության մարմինների աշխատանքը, ձեռք են բերում դիվանագիտական, առաջնորդական, հռետորական և լեզվական հմտություններ, փոխզիջման գնալու կարողություններ:

Վիքիակումբ. Վիքիմեդիա Հայաստան գիտակրթական ՀԿ-ի կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող հեղինակային նախագիծ է, որը ոչ ֆորմալ կրթության օղակ է: Հիմնական այցելուները դպրոցականներն ու երիտասարդներն են, սակայն կազմակերպությունը խթանում է նաև մեծահասակների ընդգրկումը:

Տեղական մակարդակում որոշումների կայացմանը երիտասարդների ներգրավման ուղեցույց (հասկացություններ, մեթոդներ, մոդելներ, ձևաչափեր), ԿԱԶԱ հիմնադրամ, 2022:

Քաղաքացիական կրթություն և մասնակցություն/ACE ծրագիր, տարբեր բուհերում հիմնվել են Քաղաքացիական կրթության կենտրոններ:

NDI Armenia's Debathon, հնարավորություն է տալիս երիտասարդների մոտ ձևավորել հաղորդակցման անհրաժեշտ հմտություններ:

Safe YOU բջջային հավելվածի ուղեցույց շահագրգիռ կողմերի համար՝ ուղղված գենդերային բռնության հետ կապված թվային բովանդակության ստեղծմանը և կանանց ու դեռահաս աղջիկներին գենդերային բռնությունից պաշտպանելուն, ՄԱԿ կանայք, 2021:

UPSHIFT Հայաստան ծրագիր, ՅՈՒՆԻՍԵՖ-ի երիտասարդական նախաձեռնություններից է, որի նպատակն է նպաստել երկրում 12-18 տարեկան դեռահասների նախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքների կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների մեջ:

Չնայած առկա բազմազանությանը, ոլորտում կան բավական չիրացված հնարավորություններ: Ուսումնասիրության մասնակիցները տեղական ու միջազգային հաջողված մոդելների ու ծրագրերի մասին իրազեկումն ավելացնելու, դրանց շուրջ քննարկումների, փորձի փոխանակումների,

համագործակցության հարթակներ ու հնարավորություններ ունենալու, դրանք մարզերում բազմարկելու կարիք են տեսնում:

ՃԱՄԲԱՐՆԵՐ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական ընդհանուր բանակումներ. ՀՀ-Սփյուռք միավորող այս միջոցառումը սովորաբար անցկացվում են 4 տարին մեկ անգամ:

ՀԲԸՄ-ի սփյուռքահայ երիտասարդներին հայրենիքին կապող սկաուտական բանակումներ:

ՀՄԸՄ-ՀԱՍԿ ՀԿ-ի միավորային, մասնաճյուղային, միջմասնաճյուղային, համահայաստանյան, միջազգային սկաուտական ընթացիկ ու տարեկան բանակումներ:

Վիքիճամբար. Վիքիմեդիա Հայաստան գիտակրթական ՀԿ-ի նախագծերից մեկն է, որի նպատակն է զարգացնել հայերեն Վիքիպեդիան Հայաստանի մայրաքաղաքի ու մարզերի տարբեր դպրոցների աշակերտների և բուհերի ուսանողների միջոցով՝ միաժամանակ ապահովելով նրանց ակտիվ հանգիստը:

GLOW (աշխարհն առաջնորդող կանայք) ճամբար. աղջիկների առաջնորդության և հզորացման ծրագիր է, որը նպատակ ունի կրթության միջոցով խթանել երիտասարդ աղջիկների շրջանում առաջնորդությունը, ընկերասիրությունը, քաղաքացիական ակտիվությունը, գենդերային հավասարությունն ու իրավագիտակցությունը, ներշնչել ինքնավստահություն և հաղորդել համապատասխան գիտելիքներ՝ իրենց համայնքների խնդիրներից բխող ծրագրեր իրականացնելու համար:

YouthON մարդու իրավունքների և քաղաքացիական կրթության ճամբար (հայտնի է նաև Հոդված 3 ճամբար):

Հայաստանյան ՔՀԿ-ները յուրաքանչյուր տարի տասնյակ ճամբարներ ու հավաքներ են իրականացնում: Սակայն, գրեթե բոլորը, մեկանգամյա միջոցառումներ են: Մասնակիցները նպատակային ու պարբերական բնույթ կրող համայնքային, մարզային, միջմարզային, ազգային ու միջազգային միջոցառումների կազմակերպման ու իրականացման կարիք են տեսնում:

ԹԵՄԱՏԻԿ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

(Ան)կախության սերունդ-Հայաստան-2023, հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, 2023:

Ազգային փոքրամասնությունների դերը տեղական ինքնակառավարման համակարգում և Արմավիրի մարզում համայանքների խոշորացման համատեքստում, Զեկույց, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, 2022:

Աշխարհը, որ մենք ենք ուզում. Կայուն զարգացման նպատակների մասին ուղեցույց երեխաների և երիտասարդների համար, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան, 2017:

Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018-2019, ՄԱԶԾ, 2019:

Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, զեկույց, ԵՆԿ ՀԿ, 2021:

Գրանիշեր. Ատելություն տարածող առցանց խոսքի դեմ պայքարը մարդու իրավունքների կրթության միջոցով, Քաղաքացիական Ֆորում հանուն քաղաքացիական հասարակության զարգացման և երիտասարդական համագործակցության ՀԿ, 2015:

Դեռահասությունը ներսից ու դրսից. Ինքնաճանաչման օրագիր, Ծնողի դպրոց ՀԿ, ՅՈՒՆԻՍԵՖ, 2022:

Դրական ծնողավարման ձեռնարկ. երեխաների դեմ բռնության կանխարգելում, Սեյվ դը չիլդրեն, 2011:

ԵԿՀ-ԱՄԿ կարիերայի զարգացման աջակցման ազգային համակարգի զեկույց, 2022:

Երիտասարդական աշխատանքի ոլորտում ուսուցողական արդյունքների վավերացման և ճանաչման վերաբերյալ իրականացված սոցիոլոգիական հետազոտության վերլուծություն, ԿԱԶԱ հիմնադրամ, 2019:

Երիտասարդական ծրագրերի գնահատման գործիքակազմ և մեթոդական ուղեցույց, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ, 2022:

Երիտասարդական ծրագրերի ուղեցույց, Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորում, 2020:

Երիտասարդները հանուն հասարակության. ձեռնարկ սկսնակ երիտասարդական աշխատողների համար, ԿԱԶԱ հիմնադրամ:

Երիտասարդների և մեծահասակների կրթությունը Օրակարգ 2030-ում և Կայուն զարգացման նպատակներում, Վերլուծություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, 2020:

Երիտասարդների կամավորական գործունեության գաղափարախոսական հիմքերն ու մշակութային դրսևորումները Հայաստանում, Տատյանա Դարբինյան, աշխատանք, 2021:

Երիտասարդների մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու որոշումների կայացմանը, Հետազոտություն, Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ, 2022:

Երիտասարդների ներառումը և սոցիալական ձեռնարկատիրությունը Հայաստանի գյուղական համայնքներում, Ձեռնարկ, Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ, 2019:

Երիտասարդությունը և անհավասարությունը Հայաստանում, զեկույց, 2017:

Զգույշ երեխաներ են, ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ երեխաների եւ բոլորի համար, Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, ՅՈՒՆԻՍԵՖ, 2018:

Թափանցիկության և քաղաքացիների մասնակցության ձեռնարկ. Հայաստան, Եվրոպայի խորհուրդ, 2020:

Ինչպես հաղորդակցվել հաշմանդամություն ունեցող երեխաների հետ, ձեռնարկ դպրոցականների համար, Սեյվ դը չիլդրեն, 2015:

Ինչպես օգնեմ ինքս ինձ արտակարգ իրավիճակներում, ձեռնարկ դեռահասների համար, Ծնողի դպրոց ՀԿ, ՅՈՒՆԻՍԵՖ, 2020:

Ինչպես օգնեմ ինքս ինձ պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում, ձեռնարկ դեռահասների համար, Ծնողի դպրոց ՀԿ, ՅՈՒՆԻՍԵՖ, 2021:

Կամավորների հետ աշխատանքի ընթացակարգ ՔՀԿ-ների համար, ՀԿ Կենտրոն, 2023:

Կամավորության լավագույն չափանիշների և հաջողված փորձի ուղեցույց, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, 2017:

Կամավորություն. արժեքային նշանակությունից մինչև գործնական քայլեր, Ձեռնարկ, 2022:

Կամավորությունը Հայաստանում. կամավորությանն առնչվող հիմնախնդիրներ, Աշոտ Սարգսյան, Գևորգ Սահակյան, Սուսաննա Գևորգյան, 2019:

Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021:

Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում, Քաղաքականության վերլուծություն, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2023:

Հայաստանում հանրային մասնակցության հարթակների և հնարավորությունների քարտեզագրում, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, 2022:

Հասարակական կազմակերպությունների կառավարման ձեռնարկ, Մերիլին Ուայաթ, 2004:

Հոգեբանական առաջին օգնության ուղեցույց ուսուցիչների, ծնողների, երեխաների հետ աշխատող տարբեր ոլորտների մասնագետների համար, 2020:

Մասնակցային կառավարման համաթիվը ՀՀ պետական կառավարման մարմինների քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում, Գնահատման զեկույց, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, 2022:

Մասնակցություն համայնքի ավագանու նիստերին և հանրային լսումներին (2022-2023 թթ), Զեկույց, Վարդենիս խոշորացված համայնքի օրինակ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, 2023:

Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույց, ՀՀ ԱԳՆ, ՄՆԿ, 2022:

Մեծահասակների կրթությունը Հայաստանում 2020-21. Հետազոտություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, 2021:

Մեծահասակների կրթությունը Հայաստանում. Քաղաքականության և պրակտիկայի ուսումնասիրություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, 2020:

Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը Հայաստանում. որակական ուսումնասիրություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, 2021:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ուսանողների աչքերով, 2021:

Ներգրավված քաղաքացի. ուսանողի ձեռնարկ, 2-րդ հրատարակություն (տպագիր):

Շիրակի մարզում երիտասարդների ոչ ֆորմալ կրթության կարիքների վերհանում, Զեկույց, Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ, 2022:

Ոչ ֆորմալ կրթության ներածություն. ձեռնարկ ուսուցանողների համար, Թրեյներների ազգային թիմ ՀԿ, 2013:

Ուսումնական ձեռնարկ 13 Կայունություն և Երիտասարդական աշխատանք, Եվրոպայի խորհուրդ, հայերեն թարգմանությունը՝ 2022:

ՍահմանելOFF փոփոխությON. Ձեռնարկ երիտասարդ ակտիվիստի համար:

Սոցիալ-դեմոկրատիա. գիրք 1. Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը, Թոբիաս Գոմբերտ և ուրիշներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2011:

Սոցիալ-դեմոկրատիա. գիրք 2. Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան, Սիմոն Ֆաութ և ուրիշներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ:

Սոցիալ-դեմոկրատիա. գիրք 3. Սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա, Ալեքսանդր Փեթրինգ և այլք, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մ/ճ, 2014:

Սոցիալ-դեմոկրատիա՝ պարզ և համառոտ 1. Մուտք սոցիալ-դեմոկրատիա, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2018:

Սոցիալ-դեմոկրատիա՝ պարզ և համառոտ 2. Սոցիալական տնտեսություն, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, 2021:

Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդի ուղեցույց, Համաշխարհային հայկական երիտասարդական ՈՍՏԱՅՆ միջազգային ՀԿ, 2016:

Վանաձորի երիտասարդական իրավիճակի վերլուծություն, ՀԿ Կենտրոն ՔՀՁ ՀԿ, 2019:

Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա, հայերեն թարգմանությունը՝ 2017 թ., ԿԱՁԱ հիմնադրամ:

ՏԻՄ-ն ու երիտասարդը. Երիտասարդների ներառումը և մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, Ձեռնարկ, Ուղի դեպի ներառական հասարակության զարգացման ՀԿ, 2022:

Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, Ձեռնարկ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ:

Փոխհարաբերությունները սկսվում են վերաբերմունքից. Հոգեբանական ձեռնարկ հաշմանդամություն ունեցող անձանց մտերիմների համար, Եվա Ասրիբաբայան, 2013:

Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանապարհին, Գ. Տեր-Գաբրիելյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021:

Քաղաքացիության ինդեքս. Ախուրյան բազմաբնակավայր համայնք, ելեկտրոնային հետազոտություն, 2023:

ՔՀԿ չափիչ 2023 Հայաստան, Նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավազորման կողմնացույց, Զեկույց, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2023:

Քովիդ-19-ի պայմաններում երիտասարդների հոգեկան առողջությունը, Ուսումնասիրություն, ԵՆԿ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2021:

Contribution of Partner Countries to Eu Youth. Wiki. Chapter III: Armenia, Employment and Entrepreneurship, Youth Partnership, Arsen Simonyan, 2023:

Educational Tool-Box. On Non-Formal Training And Simulation Gaming For Stimulating Entrepreneurial Thinking Of Rural Youth. Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ, 2021:

Handbook of youth participation and youth inclusion in the eastern partnership countries, Armenian Progressive Youth NGO, 2019:

The future of work, Policy Paper, Council of Members // Extraordinary General Assembly Amiens, France 22-23 November 2019:

The Participatory Analysis for Community Action (PACA) Field Guide for Volunteers, Peace Corps, Office of overseas programming and training support (OPATS), Publication No. M0127, 2018:

Վերոնշյալ թեմատիկ հրապարակումները ոչ ամբողջական, սակայն բավական ընդգրկուն ռեսուրսներն են, որոնք կարող են օգտագործել երիտասարդական աշխատողներն ու ՔՀԿ ներկայացուցիչները: Հիմնական խնդիրն այն է, որ թե՛ համայնքային, թե՛ մարզային, թե՛ ազգային ներկայացուցչական հետազոտությունները չափազանց քիչ են, առավել ևս՝ դրանց արդի (թարմ) տարբերակներն ուշ-ուշ են հրապարակվում: Ուսումնասիրության մասնակիցները շեշտել են, որ կցանկանային և՛ ընդհանրական, և՛ նեղ, թեմատիկ ոլորտային հետազոտություններ ունենալ ձեռքի տակ:

ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ, ԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էնցիկլոմեդիա. տարաբնույթ թեմաներով փողքասթերի շարք, մեդիագրագիտության հանրագիտարան, ՄՆԿ:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ-ի տարբեր թեմաներով օգտակար տեսանյութեր:

Լինել քաղաքացի, Բուն TV տեսաշարք:

Խոսում են երիտասարդները մեդիա նախագիծ, ԵՆԿ ՀԿ, 2023:

Կանանց քաղաքական մասնակցություն. փոդքաստների շարք, Կանանց իրավունքիի տուն:

Կյանքի համընդհանուր հմտություններ, Բուն TV տեսաշարք:

Կյանքի հիմնարար հմտություններ. WELL PR Agency:

Կրթության դերը քաղաքացու ձևավորման գործում. Կարինե Գյադուկյան, Բուն TV:

Կրթություն, Բուն զրույց, Բուն TV-ի 15 քննարկումից (2023 թ. դեկտեմբերի դրությամբ) բաղկացած տեսաշարք:

Հայաստանում մեծահասակների կրթության վրա ազդող գործոնները. Էսթեր Հակոբյան, Բուն TV:

Հեռուստատեսային դասեր և սոցիալական իրազեկող հոլովակներ, Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ:

Մասնակցային կառավարում. Կարեն Հովհաննիսյան, Բուն TV:

Մեդիագրագիտության տեսադասեր (3 հատ՝ 2023 թ. դեկտեմբերի դրությամբ), ՄՆԿ:

Մեծահասակների կրթության իրականացման ձևերը. Տաթև Մարգարյան, Բուն TV:

Մեծահասակների կրթության տեսական հիմքերը. Սերոբ Խաչատրյան, Բուն TV:

Մեծահասակների կրթություն և ցկյանս ուսումնառություն. Էդիթ Սողոմոնյան, Բուն TV:

Մեծահասակների ոչ ֆորմալ կրթության ներուժը. Արեգ Թադևոսյան, Բուն TV:

Մենթորություն. Հասմիկ Սահակյան, Բուն TV:

Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան, Բուն TV:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության նախնական արդյունքների ճանաչում. Արամ Ավագյան, Բուն TV:

Ոչ ֆորմալ կրթություն. Արեգ Թադևոսյան, Բուն TV:

Սերունդ ԵՎՕՖ. երիտասարդական հաղորդաշար երիտասարդներին հուզող հարցերի մասին, Բուն TV տեսաշարք:

@eucoeyouth. Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության Յութուբյան ալիք:

TED-ը՝ որպես մեծահասակների կրթության հարթակ. Քրիստինե Սարգսյան, Բուն TV:

UNDER 30' Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության փոդքասթների շարքը, որը ներկայացնում է հետազոտության արդյունքներ, երիտասարդների կյանքի միտումները և երիտասարդական քաղաքականության և պրակտիկայի համար համապատասխան թեմաներ:

Վստահաբար համացանցում կարելի է էլի գտնել ուսումնասիրության թեմատիկ շրջանակին համապատասխան օգտակար տեսանյութեր ու ձայնագրություններ, սակայն դրանց տեսանելիությունը բավարար չի եղել քարտեզագրման ժամանակ մեր տեսադաշտում հայտվելու

համար: Առկա ռեսուրսների էական մասը «մեծահասակների» համար է, կարիք կա հայալեզու և երիտասարդներին հասկանալի լեզվով ու անիմացիոն լուծումներով օգտակար նյութերի ստեղծման: Ուսումնասիրության բոլոր մասնակիցները միանշանակ պնդել են, որ երիտասարդների համար ու հենց երիտասարդների կողմից պատրաստված տեսաշարերի, վիդեոբլոգների, փոդքաստների խիստ կարիք կա:

ԹՎԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ, ԳՈՐԾԻՔՆԵՐ

Երիտասարդների պոզիտիվ զարգացման գնահատման գործիքի և երիտասարդական ոլորտի տերմինների բառարան, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն:

Կազմակերպական կարողությունների զարգացման գործիք:

Հակակոռուպցիոն բառարան, Թրանսպարենսի Ինթերնեշնլ:

Մարդու իրավունքների թեմայով քուիզներ, Հանուն հավասար իրավունքների կրթական կենտրոն ՀԿ:

Coyote. Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության առցանց ամսագիր, որն ուսումնասիրում է երիտասարդական աշխատանքի պրակտիկայի, քաղաքականության և հետազոտությունների տարբեր առանձնահատկություններն ու համընկնումները:

Glossary on youth. երիտասարդության մասին բառարան, որը հրապարակված է որպես Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության ռեսուրս:

Illustrations / Infographics. երիտասարդության հարցերին առնչվող տարբեր թեմաներով նկարազարդումների և ինֆոգրաֆիկաների առցանց գրադարան, որը հրապարակված է որպես Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության ռեսուրս:

Inspiring recognition practices and tools. երիտասարդական աշխատանքի ճանաչման պրակտիկաների ու գործիքների շտեմարան, որը հրապարակված է որպես Եվրոպայի խորհրդի երիտասարդական գործընկերության ռեսուրս:

Karapp. հավելվածը մատուցում է ոչ գեղարվեստական բեսթսելերների հիմնական գաղափարներն ու վերլուծությունները 15 րոպեանոց աուդիոսեղմագրերի տեսքով: Օգնում է գիտելիքների պաշարը մեծացնելուն և հնարավորություն է ընձեռում նոր հեռանկարներ ձեռք բերել բիզնեսի, ինքնազարգացման, հոգեբանության, նորարարության ու այլ ոլորտներում:

Safe YOU բջջային հավելված՝ ուղղված կանանց ու դեռահաս աղջիկներին գենդերային բռնությունից պաշտպանելուն:

Այս բաժնի հետ կապված անելիքներն ավելի հրատապ են, քանի որ համացանցի և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների ազդեցությունը երիտասարդների վրա օր օրի է ավելանում ու երիտասարդների թվային կենսակերպը ավելի ու ավելի մեծ տեղ է զբաղեցնում իրենց առօրեայում: Ուսումնասիրության մասնակիցները նշել են, որ անհրաժեշտ է

ձեռքի տակ ունենալ ինչպես առցանց միջավայրում երիտասարդներին անվտանգ, օգտակար, հետաքրքիր ու արդյունավետ աջակցություն տրամադրելու, այնպես էլ նրանց ցանցից դեպի իրական կյանք «վերադարձնելու» գործիքներ:

ԽԱՂԵՐ

Ամենաքաղաքացի. նպաստում է իրավունքների և պարտականությունների ճանաչմանը, ԿԱՀԱ:

Այն ինչ չեն սովորեցնում դպրոցում. 570 զվարճալի ու անսպասելի հարցերի միջոցով օգնում է սովորել փաստեր, գիտելիքներ, վիճակագրություն, Դե (Dee):

Բա հետո. նպաստում է պատմություններ պատմելու կարողության զարգացմանը, Well PR:

Գերակայություն. սոցիալական բիզնես խաղ է, որը նպաստում է տրամաբանության, շփման հմտության, մարատավարական մտածելակերպի զարգացմանը, Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիա, (սեղանի խաղ, առցանց տարբերակ չունի):

Եկեք խաղանք հայերեն. ավանդական խաղերի շտեմարան, ՀԿ Կենտրոն, 2020:

Զբաղմունք. նպաստում է արցախյան բառբառը սովորելուն (հատկապես կարևոր է երիտասարդական աշխատողների համար), Դե (Dee):

Էթիկա. օգնում է վաղ տարիքից յուրացնել վարվեցողության կանոններ, Դը Գեյմ:

Էնթեր Դիգնիթիլենդ. մարդու իրավունքների կրթության միջոցով երիտասարդներին սովորեցնում է սոցիալական իրավունքները, ԿԱՀԱ:

Իրավունքն այլ կերպ. թեմատիկ սեղանի խաղ:

Լիտերատուրսի արկածները. նախատեսված է պատանիների համար, որն օգնում է զարգացնել տեղեկություններ գտնելու, դրանք վերլուծելու և ստուգելու, կեղծ ու հավաստի լուրերը տարբերելու հմտությունները, սովորեցնում է ավելի լավ կողմնորոշվել տեղեկատվական միջավայրում: Խաղը հասանելի է մի քանի լեզուներով, ՄԼԿ:

Կոռուպցիա. Shift+Delete. նպաստում է մարդու իրավունքների, կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության, մեդիագրագիտության և քննադատական մտածողության, ինչպես նաև քաղաքացիական կրթության իրազեկվածության բարձրացմանը խաղացողների շրջանում, Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամ:

Մեդիագիտակ. նպաստում է մեդիագրագիտության և քննադատական մտածողության զարգացմանը, Հանրային լրագրության ակումբ և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ:

Մեդիախաչբառ. օգնում է ծանոթանալ մեդիաաշխարհի հասկացություններին, անձնական տվյալների պաշտպանության, թվային անվտանգության և գրագիտության կանոններին, Հանրային լրագրության ակումբ և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, 2022:

Մեդիամարտ. նախատեսված է դպրոցական միջին և ավագ դասարանների աշակերտների համար և օգնում է սովորել մեդիագրագիտության հիմնական սկզբունքները, ծանոթացնում է մեդիայի պատմությանը, ներկայացնում մեդիայի տարբեր տեսակներն ու դրանց

առանձնահատկությունները, լուրի կառուցվածքն ու լրատվության մեջ կիրառվող մանիպուլյացիաները, իսկ վերջում առաջարկում է գիտելիքը ստուգող հարցաշար, ՄՆԿ:

Մոտիվ. օգնում է ճանաչել աշխարհ փոխած 200 մարդկանց, սովորել ավելի քան 600 փաստ և ոգեշնչվել, Դե (Dee):

Յայլա. օգնում է արևմտահայերենի և արևելահայերենի իմացությանը, ԿԱԶԱ:

Նետոյի առասպելը հակակոռուպցիոն եռաչափ խաղ և ինտերակտիվ կոմիքս. խաղացողը գլխավոր հերոսների միջոցով պետք է զանազան խնդիրներ լուծի՝ Նետո մոլորակը կոռուպցիայից և կործանումից փրկելու համար: Խաղը ստեղծել են Թումոյի սաները:

Պատմիչ. ասացվածքների ու դարձվածքների միջոցով նպաստում է պատմություններ պատմելու կարողության զարգացմանը, Դը Գեյմ:

Պերսիպիո. նկարների միջոցով ներկայացվում է ժամանակակից աշխարհի տարբեր մարտահրավերներ՝ անդրադառնալով սոցիալական, քաղաքական, բնապահպանական և այլ ոլորտների, ԿԱԶԱ:

Պոլիտեա. նպատակն է զարգացնել խաղացողների քաղաքագիտական-քաղաքացիական գիտելիքները, Թրանսփերենսի Ինթերնեյշնլ:

Սիմբոլուս. նպաստում է միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ԿԱԶԱ:

Սիվիկ. բառերի և դերերի աշխարհում, 41 խաղաքարտերը և 11 դերերն օգնում են հետաքրքիր և գրավիչ ձևով խոսել սոցիալական հարցերի և երևույթների մասին, ԿԱԶԱ:

Տիմագետ. նախատեսված է Տեղական ինքնակառավարման ու ՏԻ մարմինների և դրանց առնչվող թեմաների մասին իրազեկվածության բարձրացմանը, ՀԿ Կենտրոն ՔՀՁ ՀԿ և Եվրասիա համագործակցության հիմնադրամ:

Ցանցառ. նպատակն է համակարգչի և ինտերնետի օգտատերերին տեղեկացնել կիբեր տիրույթի վտանգների մասին և սովորեցնել պաշտպանվել՝ ներկայացնելով անվտանգության առկա հնարավորություններն ու գործիքները: Նախատեսված է մեծահասակների համար, բայց կարող է կիրառվել նաև ավագ դասարաններում, բուհերում, ՄՆԿ:

Քարկապ. նպաստում է միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ԿԱԶԱ:

Ֆինանսները այլ կերպ. թողարկվել է ՀՀ Կենտրոնական բանկի և Ֆինանսական հաշտարարի գրասենյակի նախաձեռնությամբ (որպես սեղանի խաղ և հավելված):

Ֆուտուրո. ծանոթացնում է կայուն զարգացման նպատակներին, ԿԱԶԱ:

911. սովորեցնում է ճիշտ ու արագ կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում, Դը Գեյմ:

AGATE ծրագրի ձեռնարկատիրական խաղեր (անգլերեն):

EQ էմոցիոնալ ինտելեկտ. նպաստում է սեփական ու այլ մարդկանց էմոցիաները ճանաչելուն և հույզերն արտահայտելուն, Դը Գեյմ:

Նույնը նաև այս բաժնի հետ կապված պետք է ասել, որ անելիքները բավական հրատապ են: Թե՛ երիտասարդները, թե՛ երիտասարդական աշխատողները չափազանց հետաքրքրված են հետաքրքիր, գրավիչ, ուսուցողական ու զարգացնող սեղանի ու թվային խաղերով:

Սակայն, երիտասարդների հետ աշխատելիս միշտ պետք է առաջնային լինի խաղերի կիրառման նպատակը: Օրինակ, սիմուլիացիոն խաղեր՝ փոփոխությունների թատրոն, ճնշվածների թատրոն կազմակերպելիս դրանց նպատակը ոչ թե դերասանական վարպետության զարգացումը պետք է լինի, այլ որոշակի հիմնախնդիրներ քննարկելը, լուծման ուղղիներ գտնելը և այլն:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Փորձագիտական ու ֆոկուս խմբային քննարկումների բոլոր մասնակիցները շեշտել են, որ ոչ ֆորմալ կրթությունն առավել ընդունակ է արձագանքելու «Երիտասարդության կարիքները» բաժնում նշված խնդիրներից շատերին:

Սրա հետ կապված քաղաքացիական հասարակության կառույցներն ու երիտասարդների հետ աշխատող մասնագետները / երիտասարդական աշխատողներն ունեն հետևյալ գործիքների, պրակտիկ հնարավորությունների կարիքը: Ի միջիայլոց, երիտասարդները ևս նշել են, որ նմանատիպ հնարավորությունների դեպքում առավել մեծ մոտիվացիայով ու հետաքրքրվածությամբ կմասնակցեն ծրագրերին:

Ա) Անվտանգային մարտահրավերների, անորոշ ապագայի մասով առաջարկ

Ինչպես նշեցինք, ուսումնասիրության մասնակիցները լրջագույն մարտահրավերներն են տեսնում, որոնք մտահոգում ու անհանգստացնում են նրանց: Չնայած իրավիճակին, ոչ ֆորմալ կրթության միջոցով այստեղ երիտասարդների ու երիտասարդական աշխատողների մի շարք հմտությունները և ՔՀԿ-ների կարողությունները զարգացնելու ու ապագային նրանց պատրաստելու հնարավորություններ կան:

<u>Մասնավորապես՝ երիտասարդների համար.</u>

Խնդիր	Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ
Շրջապատող աշխարհի փոփոխականություն ու անկայունություն (Volatility)	Անհրաժեշտ է ստեղծել երիտասարդների ճկունությունը, հարմարվելու ունակությունը (դրական իմաստով) (Agility) զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Ապագայի անորոշություն (Uncertainty)	Անհրաժեշտ է ստեղծել նրանց նպատակասլացությունը, հաստատակամությունը (Grit) զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Կյանքի բարդություն (Complexity)	Անհրաժեշտ է ստեղծել նրանց՝ գաղափարների զարգացման ու հնարավորությունների կառավարման (Ideation and Opportunity management), ինչպես նաև որոշումների կայացման (Decision making) հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Խնդիրների բազմաշերտություն ու երկիմաստություն (Ambiguity)	Անհրաժեշտ է ստեղծել նրանց բանակցման ու համոզման (Negotiation and Persuasion) հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Պարբերաբար ի հայտ եկող ճգնաժամեր	Անհրաժեշտ է ստեղծել երիտասարդների տոկունությունը, դիմակայունությունը (Resilience) զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:

Երիտասարդական աշխատողների մասով.

Խնդիր	Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ
Կարիքների չընկալում	Անհրաժեշտ է ստեղծել թե՛ սեփական, թե՛ երիտասարդների կարիքները գնահատելու, մոնիթորինգ անելու կարողությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Ավելորդ հուզականություն	Անհրաժեշտ է ստեղծել հույզերի կառավարման ու սթրեսակայունության հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Ոչ պատշաճ արձագանքում	Անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական առաջին օգնության, երիտասարդական աշխատանքի, սոցիալական աշխատանքի, տարիքային հոգեբանության, մենթորության ու համանման այլ գիտելիքներն ու հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Չկազմակերպված երիտասարդների գերակշռող թիվ	Անհրաժեշտ է ստեղծել երիտասարդների ներգրավման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Նախաձեռնողականության, պատասխանատվության ստանձման պակաս	Անհրաժեշտ է ստեղծել առաջնորդական, արագ կողմնորոշման, պատասխանատվության ստանձման, որոշումների կայացման կարողությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Արտակարգ իրավիճակներին անպատրաստվածություն	Անհրաժեշտ է ստեղծել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելու գործնական կարողությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:

ՔՀԿ-ների ու նախաձեռնությունների մասով անհրաժեշտ է, որ նրանք զարգացնեն իրենց կարողությունները.

Խնդիր	Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ
ՔՀԿ-ների թիմերի թույլ կարողություններ	Անհրաժեշտ է ստեղծել ՔՀԿ-ների մարդկային ռեսուրսների կառավարման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Վատ պլանավորում	Անհրաժեշտ է ստեղծել ռազմավարական պլանավորման ու կառավարման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ: Օրինակ՝ Հասարակական կազմակերպությունների կառավարման ձեռնարկ կամ Կազմակերպական կարողությունների զարգացման գործիք կամ Կազմակերպական կառավարում
Ճգնաժամերին անպատրաստվածություն	Անհրաժեշտ է ստեղծել ճգնաժամային կառավարման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:

	Օրինակ՝ ՀՀ ԱԻ նախարարության կամ R5 Արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոնի օգնությամբ:
Համակարգերի, գործողությունների պլանների բացակայություն	Անհրաժեշտ է ստեղծել արագ արձագանքման և առաջնային աջակցության համակարգերի ստեղծման, արդյունավետ գործելու ու կառավարման, ինչպես նաև շահերի պաշտպանության հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
	Անհրաժեշտ է ստեղծել երեխաների և երիտասարդների համար հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության (MHPSS) համակարգերի և ծառայությունների կազմակերպման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Գնահատման դժվարություններ	Անհրաժեշտ է ստեղծել գնահատման գործիքների մշակման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Մասնագետների, երիտասարդական աշխատողների պակաս	Անհրաժեշտ է ստեղծել երեխաների և երիտասարդների համար դիմակայունության ուսուցանողների (Tutors of resilience) պատրաստման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Աջակցման ծրագրերի մշակման ու իրականացման թույլ կարողություններ	Անհրաժեշտ է ստեղծել երիտասարդներին վերականգնող ու զարգացնող երկարաժամկետ ծրագրերի մշակման ու իրականացման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
Ոլորտային թույլ համագործակցություն	Անհրաժեշտ է ստեղծել համագործակցության և կապերի ստեղծման, ցանցերի ստեղծման հմտությունները զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:

Որպես միջոց կարող են օգտագործվել նպատակային դասընթացները, առաջնորդական դպրոցներն ու ճամբարները, համայնքային զարգացման ծրագրերը, վարժանքները և այլն:

Ըստ այդմ, օրինակ, անհրաժեշտ է մշակել / ձեռքի տակ ունենալ.

- Հույզերի կառավարման, մասնագիտական այրման և հյուծվածության բացառման,
- Հոգեբանական առաջին օգնության (PFA),
- Հետտրավմատիկ սթրեսային խանգարման (PTSD),
- Դիմակայունության մեթոդի (Resilience Method),
- Արտակարգ իրավիճակներում գործելու վերաբերյալ ձեռնարկներ, կրթական մոդուլներ, վարժություններ, սիմուլացիոն խաղեր, գործիքներ և այլն:

Բ) Երիտասարդական պետական ու համայնքային քաղաքականությունների բացերի / բացակայության մասով առաջարկ

Այստեղ կարելի է հենվել արդեն իսկ առկա օրինակելի պրակտիկաների, մոդելների վրա՝ զարգացնելով ու բազմարկելով դրանք: Մասնավորապես՝

Խնդիր	Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ
Երիտասարդության մասին արդիական ու փաստարկված տվյալների բաց	Անհրաժեշտ են երիտասարդների առանձին խմբերի ու առանձին կարիքների մասին փաստերի վրա հիմնված, խորքային տեղեկատվություններ: Ժամանակին հրապարակվում էին Երիտասարդության ազգային զեկույցներ, որոնք համապետական ներկայացուցչական հետազոտություններ էին: Ներկայումս պետության կողմից դա չի արվում, կարիք կա վերսկսելու:
	ՔՀԿ-ների կողմից Գյումրիում, Վանաձորում, Երևանում իրականացվել են երիտասարդության իրավիճակի վերլուծություններ: Այլ համայնքներ ևս, հատկապես՝ հաշվի առնելով բնակավայրերի վերջին խոշորացումները, կարող են փորձել ջանքեր դնել երիտասարդության իրական կարիքներն ու ակնկալիքները բացահայտող տեղեկատվություն ստանալ:
Քաղաքականության բացակայություն	Մի քանի համայնքում փորձ է արվել մշակել ու գործադրել երիտասարդական համայնքային քաղաքականություններ: Դրանցից առաջին փորձը եղել է Գյումրի քաղաքում[42]: Այս ուղղությունն անհրաժեշտ է զարգացնել:
Երիտասարդական տեղեկատվության, միասնական շտեմարանների բացեր	Տեղեկատվության լիարժեք հասանելիությունը ապահովելու համար անհարժեշտ է ստեղծել կամ վերանայել եղած հարթակները, դրանցում լիարժեք և պարբերաբար թարմացվող տեղեկություններ հրապարակել, ապահովելով, որ դրանք մատչելի լինեն երիտասարդների տարբեր խմբերի և երիտասարդական աշխատողների համար, ինչպես նաև ներդնելով «բաց տվյալների» ձևաչափը՝ փաստաթղթերի ու նյութերի համադրումն ու վերլուծությունը հնարավոր դարձնելու համար:
Համայնքային ենթակայության երիտասարդական կենտրոնների բացակայություն	Գյումրիում գործում է համայնքապետարանի կողմից ստեղծված ՀՀ-ում առաջին՝ Երիտասարդական պալատ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը: Այլ համայնքներ կարող են դիտարկել այս օրինակը:
Անկախ երիտասարդական կենտրոնների պակաս	Մի շարաք ՔՀԿ-ներ ստեղծել են երիտասարդական կենտրոնների մոդելներ: Օրինակ՝ ԵՆԿ-ի Երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոնները, Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ-ի Ալտերնատիվ երիտասարդական կենտրոնը և այլն:

[42] Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, զեկույց, ԵՆԿ ՀԿ, 2021, Ներդիր 2, էջ 38-39, https://yic.am/wp-content/uploads/2022/11/GYSA-2021_hy.pdf [20.12.2023]

	Պետական աջակցությամբ ներկայումս երիտասարդներին հարմարեցված միջավայրեր են ստեղծվում տարբեր համայնքներում:
Երիտասարդական կենտրոնների գործունեության որակի բացեր	Կենտրոնների հետ կապված անհրաժեշտ է գտնել դրանց գործունեության որակի գնահատման մեխանիզմներ: Կարող է օգնել այս ուսումնասիրությունը:
Երիտասարդական աշխատողների պակաս	Մի շարք համայնքապետարաններում փորձ է արվում ներդնել երիտասարդական հարցերով պատասխանատուի / երիտասարդական աշխատողի հաստիք: Այստեղ անհրաժեշտ է մշակել պահանջվող կարողությունների և գործառույթների / պարտականությունների հստակ շրջանակ:
Երիտասարդական աշխատանքի թույլ որակ	Մի շարք ՔՀԿ-ներ ունեն իրենց երիտասարդական աշխատողների պատրաստման հաջողված համակարգեր: Մշակված են ու կիրառվում են վարքագծի կանոններ, որակի գնահատման չափորոշիչներ, զարգացման ծրագրեր:

Այս ուղղությամբ անհրաժեշտ է կայացնել ու զարգացնել երիտասարդական աշխատանքի ինստիտուտը՝ ստեղծելով երիտասարդական աշխատողների կարողունակությունների ազգային շրջանակ, վերապատրաստման որակյալ երկարաժամկետ ծրագրեր ու կրթական մոդուլներ, հայալեզու մասնագիտական գրականություն, աշխատանքային մեթոդներ ու խաղեր: Երիտասարդական աշխատողների, երիտասարդների հետ աշխատող մասնագետների համար անհարժեշտ է ունենալ սուպերվիզիաների համակարգ:

Գ) Սոցիալ-տնտեսական խոցելիության մասով առաջարկ

Ինչպես վերը քննարկեցինք, զբաղվածությունը որոշիչ գործոն է երիտասարդների ինքնության, բարեկեցության և ապագայի համար[43]: Եվ, քանի որ մասնագիտական կրթությունը նպաստում է զբաղվածության ապահովմանը, սակայն չի երաշխավորում այն, այստեղ հիմնական անելիքներից մեկը պետք է լինի երիտասարդների մասնագիտական կողմնորոշման արդյունավետ համակարգերի ու ծրագրերի ստեղծումն ու իրականացնումը:

Զուգահեռ գործողությունները պետք է լինեն երիտասարդների կարիքների վրա հիմնված ոչ ֆորմալ կրթական որակյալ ծրագրերի իրականացումը, որոնց միջոցով անհրաժեշտ է զարգացնել նրանց փափուկ հմտությունները, ապահովել երիտասարդների տրանսֆորմացիան:

Խնդիր	**Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ**
Երիտասարդների փափուկ հմտությունների թույլ	Հմտությունների զարգացման բազմապիսի հնարավորություններ կան: Այստեղ կարող է օգտակար

[43] Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք, Մ. Գալստյան, Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում, Ուսումնական նյութերի ժողովածու, ԵՊՀ, 2018, էջ 111, http://publishing.ysu.am/files/Metsahasakneri_krtutyun.pdf [20.12.2023]

զարգացվածություն	լինել երիտասարդների 40 դրական կամ ուժեղ կողմերի զարգացման ձեռնարկը:
Արդյունավետ ու ազդեցիկ ծրագրերի պակաս	Երիտասարդական ծրագրերի մշակման ու գնահատման համար ցանկալի է կիրառել Երիտասարդների պոզիտիվ զարգացման գործիքը:

Դ) Կրթական հիմնախնդիրների մասով առաջարկ

Ներկայումս կրթության որակի վերահսկողությունը, հիմնականում, իրականացվում է հենց կրթական համակարգի ներսում: Սակայն առավել արդյունավետ կլիներ, եթե գործատուն ոչ միայն հանդես գար որպես պատվիրատու, այլև որպես կրթական գործընթացի վերահսկող և գնահատող: Ցանկալի է մշակել սա ապահովող ծրագրեր, մոդելներ: Օրինակ, որոշ ՔՀԿ-ներ գործատուների հետ համատեղ իրականացնում են վճարվող, կամ չվճարվող պրակտիկաների, փորձնակության ծրագրեր:

Հաջորդը, պետք է լինի կրթության ձևերի հստակ ընկալում. Դասընթացը և կրթությունը հաճախ փոխարինաբար են կիրառվում, երկուսն էլ ներառում են ուսուցման և ուսումնառության գործընթացները, սակայն այս երկու հասկացությունները տարբեր են և ունեն տարբեր նշանակություններ: Կրթությունը հիմնականում ենթադրում է երկարատև ուսուցում՝ նպատակ ունենալով ապահովել փաստերի, հասկացությունների, դեպքերի, մարդկանց, իրերի և այլնի մասին գիտելիքներ և հասկացում (իմանալ ինչ և ինչու), ինչպես նաև քննադատական և ինքնավերլուծական հմտություններ: Իսկ դասընթացը ավանդաբար կոչված է լուծելու առանձին խնդիրներ՝ ուղղված կոնկրետ հմտությունների բարելավմանը (իմանալ ինչպես (knowing how to)):

Այստեղ երիտասարդների կարիքները հիմնականում հետևյալի շուրջ են.

Խնդիր	**Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ**
Կրթական նյութի ու մատուցման ձևի անհետաքրքիր լինելը	Անհրաժեշտ է ստեղծել տեսա-լսողական, այդ թվում՝ անիմացիոն տիպի կրթական նյութեր: Ցանկալի է, որ դրանք ստեղծվեն հենց երիտասարդների կողմից:
	Ներկայացվեն հաջողության պատմություններ թե՛ հասակակից երիտասարդների, թե՛ հայտնի դեմքերի միջոցով:
Չիմանալ, թե ինչպես սովորել	Անհրաժեշտ են ձեռնարկներ, որտեղ պրակտիկ ձևով ցույց կտրվի ինչպես սովորել: Ստեղծել գործիքներ, որոնք կօգնեն «սովորել սովորել»:
Ավագ ընկերոջ, աջակցի պակաս	Անհրաժեշտ են քոուչինգի, մենթորության ծրագրեր, գործիքներ:

Իսկ ՔՀԿ-ների ու ուսուցանողների կարիքները՝ հետևյալի շուրջ.

Խնդիր	Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ
Հայալեզու գիտա-մեթոդական գրականության պակաս	ՔՀԿ-ների ու ուսուցանողների համար անհրաժեշտ են օրինակելի կրթական մոդուլներ ու կիրառելի մեթոդաբանություն:
Վերապատրաստման արդյունավետ ծրագրերի պակաս	ՔՀԿ-ների ու ուսուցանողների համար անհրաժեշտ են ToT-ների (ուսուցում ուսուցանողների համար) մոդուլներ:

Ե) Քաղաքական, քաղաքացիական մասնակցության մասով առաջարկ

Ինչպես վերը նշեցինք, երիտասարդների մասնակցությունը՝ մասնավորապես քաղաքական մասնակցությունը, երիտասարդների սոցիալականացման փուլերից մեկն է, այսինքն՝ ոչ թե առանձին խնդիր է, այլ՝ գործընթաց, իսկ երիտասարդական քաղաքականության և երիտասարդական աշխատանքի կենտրոնում մասնակցության խթանումն է[44]:

Ակադեմիական գրականության մեջ լայնորեն մեջբերվում է Ռ. Հարթի հեղինակած աստիճանակարգումը կամ երիտասարդների մասնակցության սանդուղքը, որը ցուցադրում է երիտասարդների մասնակցության տարբեր մակարդակները կամ ինտենսիվությունը, և որի միջոցով հնարավոր է հասկանալ, թե որքանով է այս կամ այն գործողությունն իրական երիտասարդական մասնակցություն:[45]

Երիտասարդների մասնակցության հասկացությունը կարող ենք խմբավորել հետևյալ կերպ ու մտածել մասնակցության խրախուսման ու իրացման մեխանիզմներ.

Խնդիր	Խնդրի լուծում կամ մեղմելու տարբերակ
Երիտասարդների ոչ բավարար մասնակցություն[46]	Անհրաժեշտ է ստեղծել մասնակցությունը՝ որպես իրավունքի իրացման գործընթաց խրախուսող գործիքներ, պրակտիկաներ:
	Անհրաժեշտ է ստեղծել մասնակցությունը՝ որպես երիտասարդների հզորացման մեխանիզմ զարգացնող գործիքներ, պրակտիկաներ:
	Անհրաժեշտ է ստեղծել մասնակցությունը՝ որպես քաղաքականության, պրակտիկայի, ծառայության արդյունավետության երաշխիք ապահովող գործիքներ, պրակտիկաներ:

[44] The participation schemes in armenian educational system, М. Галстян, Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки 1, 2020, 127-144

[45] Children's participation, from tokenism to citizenship, Roger Hart, UNICEF International Child Development Centre Spedale degli Innocenti (Florence, Italy, 1992). https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens_participation.pdf [20.12.2023]

[46] Analytical paper on Youth Participation, Young people political participation in Europe: What do we mean by participation?, Anne Crowley & Dan Moxon, Council of Europe, (October 2017), https://pjp-eu.coe.int/documents/42128013/47261980/What+is+youth+%20participation.pdf/223f7d06-c766-41ea-b03c-38565efa971a [20.12.2023]

	Անհրաժեշտ է ստեղծել մասնակցությունը՝ որպես երիտասարդների զարգացումը խրախուսող գործոն ապահովող գործիքներ, պրակտիկաներ:
	Անհրաժեշտ է ստեղծել երիտասարդների քաղաքական մասնակցությունն ապահովող գործիքներ, պրակտիկաներ:
	Անհրաժեշտ է ստեղծել ներկայացուցչական կամ ուղիղ մասնակցություն (օրինակ՝ ՀԿ, համակառավարում, երիտասարդական խորհրդարաններ, աշակերտական խորհուրդներ, ցույցեր և այլն) ապահովող գործիքներ, պրակտիկաներ:
	Անհրաժեշտ է ստեղծել հետարդիական կամ մասնակցության ապագա ձևեր (թվային մասնակցություն) ապահովող գործիքներ, պրակտիկաներ:

Միևնույն ժամանակ մասնակցային հարթակները և հնարավորությունները լիարժեք օգտագործելու համար թե՛ պետական մարմինների, թե՛ ՔՀԿ-ների կարողությունների զարգացման կարիք կա: Մասնավորապես, իրենց ձայնը լսելի դարձնելու և ազդեցիկ մասնակցություն ունենալու համար ՔՀԿ-ներին անհրաժեշտ է բարելավել փաստարկված առաջարկներ, քաղաքականության ու իրավական ակտերի նախագծեր մշակելու, ներկայացնելու հմտությունները, ինչպես նաև պետական համակարգի և օրենսդրական գործընթացի վերաբերյալ ընդհանուր գիտելիքները:

Ըստ վերոնշյալի, կարելի է մտածել երիտասարդների քաղաքացիական կրթության և քաղաքական ու քաղաքացիական մասնակցության համար կիառելի տարբեր ծրագրեր ու գործիքներ:

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Խոցելի խմբերի ներառման հետ կապված խնդիրները բազմաթիվ են, իսկ անհրաժեշտ լուծումները կարող են ռեսուրսատար լինել, սակայն առանցքային դեր ունեն բոլոր երիտասարդների համար լիարժեք ու հավասար հնարավորություններ ապահովելու համար:

Այս պահին առկա, բայց ոչ ներառական ռեսուրսները հնարավորինս պետք է վերանայվեն, իսկ առաջիկայում գործիքներ ստեղծելիս պետք է հնարավորինս հաշվի առնել հետևյալը՝

- ՔՀԿ-ների գրասենյակների ու երիտասարդական կենտրոնների ֆիզիկական մատչելիությունը տեղաշարժման խնդիրներ ունեցող երիտասարդների համար:
- Տպագիր նյութերի, առցանց հարթակների, հավելվածների հարմարեցվածությունը տեսողական սահմանափակում ունեցող երիտասարդների օգտագործման համար:
- Տեսանյութերում սուրդոթարգմանության կամ «վազող տողերի» առկայությունը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Գծապատկեր 1. Ուսումնասիրված գործիքների քանակական պատկեր 8

Գծապատկեր 2. Ուսումնասիրված փաստաթղթերի քանակական պատկեր 8

Գծապատկեր 3. Մասնակիցների քանակական տվյալներ (n=70, %) 9

Գծապատկեր 4. Մասնակիցների գենդերային բաշխում (n=70, %)..... 9

Գծապատկեր 5. 15-29 տարեկան աշխատանքային ռեսուրսներն ըստ խմբերի..... 19

ՆԵՐԴԻՐՆԵՐ

Ներդիր 1. Ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ դրույթներ ունեցող ՀՀ իրավական ակտերի ցանկ՝.. 11

Ներդիր 2. Քաղաքացիական կրթության վերաբերյալ դրույթներ բովանդակող ՀՀ իրավական ակտերի ցանկ՝..... 13

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1. ՀՀ-ում գրանցված ՔՀԿ-ների թիվը 31.12.2023 թ. դրությամբ 13

Աղյուսակ 2. ՀՀ երիտասարդների թվաքանակի բաշխումը 01.01.2023 թ. դրությամբ 15

Աղյուսակ 3. Չսովորող և չաշխատող երիտասարդներն ըստ տարիքային խմբերի..... 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Իրավական ակտեր

Ազգային ժողովի որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարության հնգամյա (2021-26) ծրագիրը հաստատելու մասին

ՀՀ օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին (2004)

ՀՀ օրենքը Կամավոր աշխատանքի մասին (2023)

ՀՀ օրենքը Կրթության մասին (1999)

ՀՀ օրենքը Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին (2022)

ՀՀ օրենքը Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին (2005)

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարություն, նախագիծ, 2021

ՀՀ կառավարության արձանագրային որոշումը ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին, (25.12.2014, N 54)

ՀՀ կառավարության արձանագրային որոշումը ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին (14.02.2006, N 50)

ՀՀ կառավարության որոշումը Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին (10.09.2015, N 1062-Ն)

ՀՀ կառավարության որոշումը Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը հաստատելու մասին (10.09.2015, N 1062-Ն)

ՀՀ կառավարության որոշումը Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին (16.03.2023, N 351-Լ)

ՀՀ կառավարության որոշումը Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին (13.05.2021, N 744-Ն)

ՀՀ ԿԳ նախարարի հրաման Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ենթակա մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին (05.02.2016, N 83-Ն)

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանը Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցը հաստատելու մասին, (30.12.2022, N 2505-Ա/2)

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանը Հանրակրթական ուսումնական հաստատություններում Հասարակագիտություն առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին (30.03.2023, N 32-Ն)

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանը Հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ և 11-րդ դասարանների Հասարակագիտություն առարկայի ծրագրերը հաստատելու մասին (03.07.2023, N 81-Ն)

Վիճակագրական տեղեկագրեր

Աշխատանքի շուկան Հայաստանում. 2023, 9-րդ մաս, Երիտասարդություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2023, Մաս 2. Բնակչություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգ, 2023 թվականի հաշվետվություն

Հրապարակումներ

(Ան)կախության սերունդ-Հայաստան-2023, հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ, 2023,

Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, զեկույց, ԵՆԿ ՀԿ, 2021

Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց թիվը 100 հազար 632 է: Արմենպրես, 04.10.2023

ՀՀ երիտասարդների քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը հետպատերազմյան իրականությունում. ընկալումներ և պրակտիկաներ, Մարինա Գալստյան, Վերլուծական տեղեկագիր (ՔՄՀԿ) 16 (2023): 55-78 DOI: 10.56673/18294502-23.16-79

Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք, Մ. Գալստյան, Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում, Ուսումնական նյութերի ժողովածու, ԵՊՀ, 2018

Քաղաքացիական հասարակության ներկա վիճակը և փոփոխվող դերը հանրային քաղաքականության գործընթացներում. Հետազոտության զեկույց, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2022

Analytical paper on Youth Participation, Young people political participation in Europe: What do we mean by participation?, Anne Crowley & Dan Moxon, Council of Europe, (October 2017)

Azerbaijan: Blockade of Lachin corridor putting thousands of lives in peril must be immediately lifted, Amnesty International, 09.02.2023

Children’s participation, from tokenism to citizenship, Roger Hart, UNICEF International Child Development Centre Spedale degli Innocenti (Florence, Italy, 1992)

Future of Jobs, Insight report may 2023, World Economic Forum

Genocide and Forced Deportation: Nagorno-Karabakh, Genocide Watch, Sep 29, 2023

The future of work, Policy Paper, Council of Members // Extraordinary General Assembly Amiens, France 22-23 November 2019

The participation schemes in armenian educational system, М. Галстян, Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки 1, 2020

The Role of Youth in Post-Conflict Reconstruction (The Case of Liberia), Marit Woods, SIT Graduate Institute, 2011.

Youth Political Participation: Literature review, Youth Partnership, Galstyan, M., 2019

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Ա) Երիտասարդական ոլորտի փորձագետների հետ հարցազրույցի հարցաշար

Ներկայանալ, ներկայացնել ուսումնասիրություն իրականացնող կազմակերպությունը, նպատակը, ծրագրի և թեմայի շրջանակը: Տեղեկացնել և ընդգծել, որ հարցազրույցը ձայնագրվելու է (և/կամ տեսագրվելու է) միայն վերլուծության համար կարևոր տեղեկատվությունը չկորցնելու նպատակով, իսկ ստացված տեղեկությունները վերլուծվելու են ընդհանրացված ձևով, խիստ անհրաժեշտ մեջբերումները հրապարակվելու են անանուն կերպով: Տեղեկացնել, որ հարցազրույցը կտևի շուրջ 60 րոպե:

Ներածական հարց.

- Խնդրում եմ ներկայանալ. Ձեր անուն, ազգանունը, կազմակերպությունը և/կամ առնչությունը երիտասարդական ոլորտին:

Առկա կարիքների բացահայտման հարցեր.

- Ձեր կարծիքով, ներկայումս որո՞նք են հայաստանյան երիտասարդության առաջնահերթ կարիքները:

  Տեսանելի ապագայում որո՞նք են լինելու նրանց հիմնական կարիքները:

- Ձեր կարծիքով, ներկայումս որո՞նք են հայաստանյան երիտասարդների հետ աշխատող մասնագետների առաջնահերթ կարիքները:
- Ինչպե՞ս կգնահատեիք հայաստանյան երիտասարդական ՔՀԿ-ների ոչ ֆորմալ ուսուցում իրականացնելու կարողությունները և կարիքները:

Առաջարկների հավաքագրման հարցեր.

- Ծանո՞թ եք, արդյոք, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:

- Ծանո՞թ եք, արդյոք, հայաստանյան երիտասարդների առաջնորդական հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:

- Ձեր կարծիքով, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության ու առաջնորդության խթանմանն ուղղված ի՞նչ գործիքներ (հարթակներ, ձեռնարկներ, մոդուլներ, գրքեր, հավելվածներ...) են պետք երիտասարդական ՔՀԿ-ներին և մասնագետներին:

Եզրափակիչ հարցեր.

- Քննարկված թեմայի համատեքստում ունե՞ք ավելացնելու որևէ բան, որի մասին չխոսեցինք:
- Այս թեմաներով էլ ու՞մ հետ կառաջարկեիք հարցազրույց անել:

Երախտագիտություն հայտնել մասնակցության, փորձագետի ժամանակի և ներդրումների համար:

Բ) ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ հարցազրույցի հարցաշար

Ներկայանալ, ներկայացնել ուսումնասիրություն իրականացնող կազմակերպությունը, նպատակը, ծրագրի և թեմայի շրջանակը: Տեղեկացնել և ընդգծել, որ հարցազրույցը ձայնագրվելու է (և/կամ տեսագրվելու է) միայն վերլուծության համար կարևոր տեղեկատվությունը չկորցնելու նպատակով, իսկ ստացված տեղեկությունները վերլուծվելու են ընդհանրացված ձևով, խիստ անհրաժեշտ մեջբերումները հրապարակվելու են անանուն կերպով: Տեղեկացնել, որ հարցազրույցը կտևի շուրջ 60 րոպե:

Ներածական հարց.

- Խնդրում եմ ներկայանալ. Ձեր անուն, ազգանունը, կազմակերպությունը և առնչությունը երիտասարդական ոլորտին:
- Եթե ձեր ՔՀԿ-ն ունի նման փորձ, ապա խնդրում եմ ներկայացնել իր փորձը ոչ ֆորմալ ուսուցման, քաղաքացիական կրթության և/կամ առաջնորդության վերաբերյալ:

Առկա կարիքների բացահայտման հարցեր.

- Ձեր կարծիքով, ներկայումս որո՞նք են հայաստանյան երիտասարդության առաջնահերթ կարիքները:

  Տեսանելի ապագայում որո՞նք են լինելու նրանց հիմնական կարիքները:
- Թվարկված կարիքներից որո՞նք է հնարավոր լուծել ոչ ֆորմալ ուսուցման, քաղաքացիական կրթության միջոցով:
- Ինչպե՞ս կգնահատեիք հայաստանյան երիտասարդական ՔՀԿ-ների ոչ ֆորմալ ուսուցում իրականացնելու կարողությունները և կարիքները:

Առաջարկների հավաքագրման հարցեր.

- Ծանո՞թ եք, արդյոք, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:
- Ծանո՞թ եք, արդյոք, հայաստանյան երիտասարդների առաջնորդական հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:
- Ձեր կարծիքով, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության ու առաջնորդության խթանմանն ուղղված ի՞նչ գործիքներ (հարթակներ, ձեռնարկներ, մոդուլներ, գրքեր, հավելվածներ...) են պետք երիտասարդական ՔՀԿ-ներին և երիտասարդական աշխատողներին:

Եզրափակիչ հարցեր.

- Քննարկված թեմայի համատեքստում ունե՞ք ավելացնելու որևէ բան, որի մասին չխոսեցինք:

Երախտագիտություն հայտնել մասնակցության, ներդրած ժամանակի և կարևոր կարծիքների համար:

Գ) Երիտասարդական աշխատողների հետ հարցազրույցի հարցաշար

Ներկայանալ, ներկայացնել ուսումնասիրություն իրականացնող կազմակերպությունը, նպատակը, ծրագրի և թեմայի շրջանակը: Տեղեկացնել և ընդգծել, որ հարցազրույցը ձայնագրվելու է (և/կամ տեսագրվելու է) միայն վերլուծության համար կարևոր տեղեկատվությունը չկորցնելու նպատակով, իսկ ստացված տեղեկությունները վերլուծվելու են ընդհանրացված ձևով, խիստ անհրաժեշտ մեջբերումները հրապարակվելու են անանուն կերպով: Տեղեկացնել, որ հարցազրույցը կտևի շուրջ 60 րոպե:

Ներածական հարց.

- Խնդրում եմ ներկայանալ. Ձեր անուն, ազգանունը, կազմակերպությունը և/կամ առնչությունը երիտասարդական ոլորտին:
- Եթե ունենք նման փորձ, ապա խնդրում եմ ներկայացնել Ձեր փորձը ոչ ֆորմալ ուսուցման, քաղաքացիական կրթության և/կամ առաջնորդության վերաբերյալ:

Առկա կարիքների բացահայտման հարցեր.

- Ձեր կարծիքով, ներկայումս որո՞նք են հայաստանյան երիտասարդության առաջնահերթ կարիքները:

  Տեսանելի ապագայում որո՞նք են լինելու նրանց հիմնական կարիքները:
- Թվարկված կարիքներից որո՞նք է հնարավոր լուծել ոչ ֆորմալ ուսուցման, քաղաքացիական կրթության միջոցով:
- Ձեր կարծիքով, ներկայումս որո՞նք են ձեր՝ հայաստանյան երիտասարդական աշխատողներիդ առաջնահերթ կարիքները:
- Այդ կարիքներից որո՞նք է հնարավոր լուծել ոչ ֆորմալ ուսուցման, քաղաքացիական կրթության միջոցով:
- Ինչպե՞ս կգնահատեիք հայաստանյան երիտասարդական ՔՀԿ-ների ոչ ֆորմալ ուսուցում իրականացնելու կարողությունները և կարիքները:

Առաջարկների հավաքագրման հարցեր.

- Ծանո՞թ եք, արդյոք, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:
- Ծանո՞թ եք, արդյոք, հայաստանյան երիտասարդների առաջնորդական հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:
- Ձեր կարծիքով, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության ու առաջնորդության խթանմանն ուղղված ի՞նչ գործիքներ (հարթակներ, ձեռնարկներ, մոդուլներ, գրքեր, հավելվածներ...) են պետք երիտասարդական ՔՀԿ-ներին և երիտասարդական աշխատողներին:

Եզրափակիչ հարցեր.

- Քննարկված թեմայի համատեքստում ունե՞ք ավելացնելու որևէ բան, որի մասին չխոսեցինք:

Երախտագիտություն հայտնել մասնակցության, ներդրած ժամանակի և կարևոր կարծիքների համար:

Դ) Երիտասարդների հետ հարցազրույցի հարցաշար

Ներկայանալ, ներկայացնել ուսումնասիրություն իրականացնող կազմակերպությունը, նպատակը, ծրագրի և թեմայի շրջանակը: Տեղեկացնել և ընդգծել, որ հարցազրույցը ձայնագրվելու է (և/կամ տեսագրվելու է) միայն վերլուծության համար կարևոր տեղեկատվությունը չկորցնելու նպատակով, իսկ ստացված տեղեկությունները վերլուծվելու են ընդհանրացված ձևով, խիստ անհրաժեշտ մեջբերումները հրապարակվելու են անանուն կերպով: Տեղեկացնել, որ հարցազրույցը կտևի շուրջ 60 րոպե:

Ներածական հարց.

- Խնդրում եմ ներկայանալ. Ձեր անուն, ազգանունը, եթե որևէ կազմակերպության անդամ եք, խնդրում եմ նշել:
- Ձեզ ծանո՞թ են ոչ ֆորմալ կրթություն, քաղաքացիական կրթություն, առաջնորդություն հասկացությունները:
- Երբև՞է մասնակցել եք ոչ ֆորմալ ուսուցման, քաղաքացիական կրթության և/կամ առաջնորդության վերաբերյալ դասընթացների, ծրագրերի:

  Իսկ իրականացրե՞լ եք նման դասընթացներ, ծրագրեր:

Առկա կարիքների բացահայտման հարցեր.

- Ձեր կարծիքով, ներկայումս որո՞նք են հայաստանյան երիտասարդության առաջնահերթ կարիքները:

  Կարո՞ղ եք նշել Ձեր կարիքները, ակնկալիքները ապագայից:
- Թվարկված կարիքներից որո՞նք է հնարավոր լուծել ոչ ֆորմալ ուսուցման, քաղաքացիական կրթության միջոցով:

Առաջարկների հավաքագրման հարցեր.

- Ծանո՞թ եք հայաստանյան երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը:
- Ինչպե՞ս կգնահատեիք հայաստանյան երիտասարդական ՔՀԿ-ների ոչ ֆորմալ ուսուցում իրականացնելու կարողությունները և կարիքները:
- Ծանո՞թ եք, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:
- Ծանո՞թ եք, արդյոք, հայաստանյան երիտասարդների առաջնորդական հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերի / գործիքների / պրակտիկաների: (Եթե այո...)

  - Կարո՞ղ եք նշել, թե որքանով են դրանք ազդեցիկ, արդյունավետ:

  - Կարո՞ղ եք նշել, դրանց բացերը, թերությունները:
- Ձեր կարծիքով, հայաստանյան երիտասարդների քաղաքացիական ակտիվության ու առաջնորդության խթանմանն ուղղված ի՞նչ գործիքներ (հարթակներ, ձեռնարկներ, մոդուլներ, գրքեր, հավելվածներ...) են պետք երիտասարդական ՔՀԿ-ներին և երիտասարդական աշխատողներին:

Եզրափակիչ հարցեր.

- Քննարկված թեմայի համատեքստում ունե՞ք ավելացնելու որևէ բան, որի մասին չխոսեցինք:

Երախտագիտություն հայտնել մասնակցության, ներդրած ժամանակի և կարևոր կարծիքների համար: